

ՄԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ	Կախարդութիւններ (Բանախօսութիւն Պ. Գ. Ռէ- նիստի)	Փ. Ռէնիստի
ՎԷՊ	Գնանք ընթերիւ (Տփղիսի կեանքից)	Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ
ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ	Ի զո՛ւր (Ողբ պանդխտին)	ԱՆԱՆՈՒՆ
	Երգ Մշտցւոց (Մշտ շրջակայ գիւղօրէից նկարա- գրութիւնը)	
ԶԱՆԱԶԱՆՔ	Ամերիկայէն լուրեր	Մ. ԹՕՓՀԱՆԷԼԵԱՆ
ՔԱՂՈՒԾ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղալիէ տը Մոնթէբէն) Թարգմ	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ	Իսա » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 մրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դահի արծաթ
Մէկ թերթին Գինն է	»	60 փարայ


Մասիսի Խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Դպրութիւն, Նոյնառանկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՒ

1885



ԳՐԱՄԱՐՆԵՐ

ՂԱԼԱԹԻՈՑ ԳՈՐԱՍ

Ղալաթիա, 20 Սեպտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի	409 5/8
3 » » » (վճակներն)	409 1/4
3 » Բարիսի » (պանքայի)	23
3 » » » (վճակներն)	23 07 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՎԹՈՅ

Օսմանեան Քոնսուլատ

Դասեկան

Երեկ երեկոյ Գոյ. (Միաց. D. Սէ. Գ. Կ.)	45 5
Պորային գոցուեցէն վերջը »	45 5
Բերայի մէջ »	—
Առաւօտուն բացուեցաւ »	45 2
Բարձրագոյն Գին »	45 9
Նուազագոյն »	45 2
Կէս օրին »	45 4
Փոխառութիւն 1858) A. Սէ. Գ. Կ.	26
» 1862)	
» 1860)	
» 1863) B. » Կ. »	45 10
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » Կ. »	45
» 1873)	

ԻՆՆԻՖԻԷ ԵԳԻԱՄԱԿԱՆ

Երեկ երեկուն գոցուեցաւ	70 20
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	70 20
Կէս օրին	70 20

ԲԱԺՆԵՏՈՒԹՅՈՒՆ

Սօսիէթէ Ժէներալ..... Գ. Կ. Սնդի. Լ. Բ.	—
Քրէտի Ժէներալ..... » » Օսմ. »	—
Պանք տը Գոնս..... » » » »	—
Սոս. Շանսէ Է Վալէօր..... » » » »	—
Թրամուէյ..... » » » »	285
Բուժէլի երկաթուղի..... Քր.	35
Օպիկասիսն տը Բրիթիթէ..... »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի..... »	55

ԸՆԲԱՅՐ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի..... զըշ.	400
Օ Ֆրանքոնոյ..... » »	87 30
Սնդիական ոսկի..... » »	140 42
Բօլիմբէրիալ..... » »	90 42 1/2
Քրիմից..... » »	54 45
Իււլիթիթադրամ..... » »	9 46
» արծաթ..... » »	89 30
Ֆիօրին..... » »	8 35

Մէճ. արծ. (տարբ.)..... »	408 2
Վեցնոց..... »	402 25
Հինգնոց..... »	402 20
Մէթալիք..... »	97 20
Պղինձ..... »	—
Թղթադրամ..... »	—

ԵՐԻՐՈՎԱԿԱՆ ԳՈՐԱՍ

Լոնտոն, 4 Հոկտեմբեր, ժամ 5 վայր, 45 երեկոյ

Սնդի. քոնսուլատ	99 7/8
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	43 15/16
» » » գոցուեցաւ	43 3/4
» » » Կ. »	26 1/4
» » » Բ. »	45
» » » Գ. »	43 7/8
Օթօման 1874.....	67 1/2
Փոխառութիւն 1877.....	80 1/2
Պանք Օթօման.....	9 7/8
Ռուսական փոխառ. 1873.....	93 5/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ).....	64
» առանձն. (բրիտիշֆիէ).....	87 1/8
Տայրա Սանիէ.....	64
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ).....	84 1/2
Հունգարական պարտաթուղթ 40/0.....	—
Փոխանակութիւն Բարիզի վրայ.....	—

Վիեննա, 4 Հոկտեմբեր, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ.....	126 45
Օսմանեան երկաթուղի.....	17 50
Բարիզ, 4 Հոկտեմբեր, ժամ 3 վայր, 45 երեկոյ	
Յրանական Ռանթ 4 1/2 0/0.....	409 47 1/2
» » 3 0/0.....	80 52 1/2
Օսմանեան քոնսուլատ Սէրի Գ. բացուեցաւ	44 07 1/2
» » » գոցուեցաւ	43 90
» » Սէրի Բ. »	45 25
» » » Գ. »	44
Օսմանեան երկաթուղի.....	36
» Բէթի բաժնեթուղթ.....	—
Պանք Օթօման.....	497 50
Դրէտի Լիօնէ.....	525
» Ֆոնիէ.....	1345
Բաժնեւորման Լիօնի.....	1246 25
Սուէզի ջրանցք.....	2005
Ռուսական 5 0/0 1877ի.....	99
Իտալական Ռանթ.....	94 40
Եգիպտական միացեալ.....	322 50
Սպանիական (արտաքին).....	57 1/8
Բրիթիթի Թիւրք.....	347 52
50/0 Հիւլենական.....	295
Չէք Լոնտրայի վրայ.....	25 24

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34-րդ ՏԱՐԻ

1885 ՍԵՊՏԵՄԲԵՐ 21

ԹԻԻ 3788

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ԿԱԽԱՐԳՈՒՀԻՆԵՐ

ԲԱՆԱԾՈՒԹԻՒՆ Պ. Փ. ՌԵՆԻԱՌԻ

(Երբ. Նախորդ Բաժնի և Վերջ)

Զեղ արդէն ըսի թէ՝ սատանան երկու միջոցներ կը գործածէ՝ կա՛մ կախարդուհին կը համոզէ եւ զայն ըստ իւր կամաց շարժել կուտայ, եւ կա՛մ նորա մէջը կը բնակի առանց հարցնելու, նորա բերնէն կը խօսի եւ զայն կը գործածէ չարութեանց հասնելու համար։ Մի եւ նոյն եղանակաւ անասնոց մէջն ալ կը բնակի, նոյն խի՛ մեռեալներու մէջ զայնս արհաւիրելու (քրոթլաք) վերածելու համար։

Ամեն դարու մէջ այսակիրներ եղան. նոցա հետքն Աստուածաշունչի եւ Աւետարանի մէջ անպակաս է. 17-րդ դարու մէջ շատ ծագկեցաւ այսակրութիւնն, որպէս կախարդութիւնն 16-րդ ին մէջ. սոքա այն դարերու յատուկ յիմարական հիւանդութիւններ էին, որպէս մեծութեան մեծամոլութիւնն ներկայ դարուս հիւանդութիւնն է։

Այսակրութեան առաջին համատարածութիւնն Մատրիարի մի մենաստանին մէջ ծնաւ. տեսէք գրեթէ միշտ մենաստաններու, նա մանաւանդ կանանց մենաստաններու մէջ կ'սկսի, ուր՝ կրօնականութեան պարտականութիւններն և սքանչելեաց անընդհատ զբաղումներն ծնան ջղային ան-

կարգութիւններ, որ այսակրութեան վերածուեցան։

Մատրիարի համատարածութիւնն Բենեդիկտեան մենաստանի մը մէջ ծնաւ, որո կրօնուհեաց գլուխն Տօնա-Թէրէզա հաղիւ 26 տարեկան էր։ Կրօնուհի մը յանկարծ դելուժէ մը բռնուեցաւ, կը դողդոջէր, թեւերը կը ձկաւէին, բերնէն փրփուրներ կը վազէր, զանազան շարժումներ կ'ընէր, ինքզինքն օդը կը նետէր, մարմինը ծոծրակին և կրունկին վրայ կը հանգչէր, գիշերն սարսափելի աղաղակներ կը հանէր եւ վերջապէս կ'սկսէր բանդադուշելու կ'ըսէր, թէ Փէռէկոնո անուանեալ դեւ մը (կը տեսնէք, Սպանիոյ մէջ դեւերն սպանիական անուաներ ունին) իւր մէջ մտած էր. քիչ ժամանակէն նոյն իսկ Թէրէզա եւ միւս կրօնուհիներն մի և նոյն հիւանդութենէ բռնուեցան, բաց ի հինգէն։ Հոն աննկարագրելի շարունակական տեսարաններ տեսնելի կ'ունենային, կրօնուհիներն մինչ ց'ըլլայ կ'ուռային, կը մլաւէին, կը հաչէին եւ իւրաքանչիւրը Փէռէկոնոյի բարեկամներէն բնակեալ ըլլալին կը յայտնէին։ Մենաստանի խոստովանաչայրն Փռանսուա Կառսի դիւահանութեան սկիւտ, բայց բան մը չը կրնայով ընել, Սէնդ-Օֆիս գործին գլուխն անցնելով իւրաքանչիւր կրօնուհիներ յատուկ խուցերու մէջ դրաւ։ Կառսիա որ ամէն գործի մէջ եզական յատկութիւններ ունէր, գիւաց հետ մրցելէ առաջ անոնց հետ հաղորդակցութիւն ունենալուն համար զատապարտուեցաւ։

Բենեդիկտեաններու այսակրութիւնն մեծ դղրդում մը հանեց, բայց տարի մը վերջ այսինքն 1651 ին բռնուող Լուսիւլեաններու չափ նշանաւոր չ'եղաւ։

Այս նշանաւոր այսակրութեան պատմութիւնն ինձ համար պատեհ առթի մը պիտի ըլլայ այս հիւանդութիւնն իւր ամէն պարագաներովն ձեզ ծանօթացնելու համար։ Այն ատեն Լուտէնի մէջ Իւրպէն Կըռանտիէ անուանեալ 40 տարեկան իմաստուն եւ համակրալիր քահանայ մը կար, որոյ վրայ շատ կը խօսուէր իբր քաջ քարոզիչ եւ աշխարհասէր մարդ։ Իւր ընկերակիցներն վրան կը նախանձէին, եկեղեցական պարտականութեանց չի հետեւելուն եւ այլ զանազան ամբաստանութեանց համար։ Իւր եպիսկոպոսն ամէն ուրբաթ մի միայն հաց եւ ջուր ճաշակելու դատապարտեց։ Բայց այս վճիռն Պօռույի արքեպիսկոպոսէն ջնջուեցաւ։ Իւրպէն Կոանտիէ ամենայն ուրախութեամբ Լուտէն վերադարձաւ։ Այն ատեն Ռիչիէօ կարտինալն իւր խորհրդակից Լօմպարտօնը զրկեց դժուարութեանց առաջն առնելով Կոանտիէն պատժելու համար, բայց ժողովուրդն այս հրամանին հակառակ էր։ Կոանտիէ ժողովուրդէն խրախուսեալ ընդդիմացաւ եւ նոյն իսկ ծայրայեղութեան երթալով Ռիչիէօյի դէմ նշանաւոր պարսաւագիր մը գրեց։ Կառավարութիւնն եւ կղերականներն իրեն թշնամիներն էին, իւր մահն վճռուած էր, գործադրելու պատեհութիւնն այնպիսի եղանակաւ մը տեղի ունեցաւ որ ո՛չ ոք կը յուսար։

Լուտէնի մէջ Իւրսիւլեան միաբանութիւն մը կար որք ինքզինք ռեսուցնութեան նուիրած էր։ Ամէն ալ մեծատանց ցեղերէ էին, որոց մէջ կը գտնուէին Տ. Տը-Պէլիէլ, Տ. Տը Սաղելի (կարտինալի աղբական), Տ. Տը-Պառտէզիէօյ, Տ. Տը Սուատի եւ։ Աէնաֆիթ անուանեալ շինական քոյր մ'ալ։ Միաբանութեան աղօթարարն Մուսոյ անուանեալ արքայ մ'էր որոյ մահէն քիչ ժամանակ վերջ Տ. Տը-Պէլիէլ նորա ղիական տեսաւ, որ իւր անխղիւն կը մօտենար։ Այնպիսի կերպով մը ձեց, որ բոլոր մենաստանն արթնցուց։ Այս տեսարանն յաջորդ գիշերներն ալ տեղի ունեցաւ։ Կրօնուհին տեսածն իւր ընկերակիցեաց պատմեց որոց ամէնն ալ սկսան վախերնուն դողալ։ քիչ ժամանակէն մի եւ նոյն տեսարանն անոնց ամէն մէկուն սկսաւ երեւիլ, ննջարանն սարսափելի աղաղակաց եւ յիմա-

րութեան տեղի մը դարձած էր։ Այսակրութեան բառն հնչուեցաւ եւ ամէն ոք ընդունեց։ Մինեօն կանոնիկոսն իւր երկու ընկերաց հետ վանք եկաւ դեւերն հալածելու համար։ Կրօնուհեաց գլուխն Տ. Տը-Պէլիէլ Ասդարովդ դեւէն բնակեալ ըլլալն յայտնեց։ Դիւահանութիւնն սկսածին պէս կ'սկսէր ոռնալ եւ տապալիլ։ օր մը իւր զանազանաց մէջ ըսաւ թէ Կոանտիէ ժողովրդապետն իրեն վարդ նուիրելով, զինքը հրապուրած էր, թէ՛ չորս ամիսէ ի վեր ամէն գիշեր վանքն կուգար, պատերու մէջէն կը մտնէր եւ դուրս կ'ելնէր։ Միւս այսակերներն, նա մանաւանդ Տ. Տը Սաղելի ամէն օր դէման կ'ենթարկուէր, գլխաւորաբար դիւահանութեան ատեն։ Ոմանք, երեսի վրայ կը պնտկէին, գլուխնին իրենց կրունկին միացնելով, այլք ծոծրակնին ոտքերնուն ծայրին կը դպցնէին, ոմանք ալ զըրրելով կը փախէին։ քահանաներն սրբութեան տուփն ի ձեռին նոցա կը հետեւէին, լեզուներն բերաննուն դուրս կ'իյնար ունեցած եւ սեւ։ Բանդագուշանքն մկնաձգտութեան հետ կը միանար, այսակիրներն իրենց դեւն կը տեսնային։ Տ. Տը-Պէլիէլ 7ը հատ կը ճանչնար, Տ. Տը Սաղելի 8 հատ, Տ. Տը Մօտ 4 հատ։ Այս դեւերուն Ասմոդէս, Ասդարովդ, Լէվիաթան, Խաբառօ, Ռարիէլ, Բեհեմօթ, Տագօն, Մագօն եւ անուն կուտային։ տեսէք մենաստաններու մէջ դեւերն աստուածաբանութեանց մէջ գտնուած անուններով կ'անուանուէին։

Երբեմն կրօնուհիներն անդգայութեան մէջ կ'իյնային, երբեմն ալ գիշերաչրիկութեան կ'ենթարկուէին, և կատարեալ ինքնաբերութեամբ կը թափառէին, միշտ դեւ բնակեալ ըլլալ կը կարծէին, եւ ըստ իւրեանց նոցա հնազանդելու համար էր որ կը տապալէին, անխմստ ճառեր կը խօսէին եւ զ'ստուած կ'ուրանային եւ պիղծ արարքներ կ'ընէին։

1655 ին Գանսայի մէջ միայն Լուտէնի այսակիրներուն վրայ կը խօսուէր։ Թագաւորին եղբայրը Կասթօն տ'Օրլէան գնաց զայն տեսնելու համար, որում դիւահան հարք, Սիւռէն, Թուանքիլ եւ Լակիթանս գելման տեսարաններ կը ցոյցնէին։ Անգամ մ'իշխանին ներկայութեամբ հայր Սիւռէնը

գիւտահանութիւն ըրած ատեն ինքն ալ գիւտահանութենէ բռնուեցաւ, խելօք կորսընցուց, գետինն կը տապալէր եւ կ'ըսէր թէ Խաբառօմը իւր մարմնոյն մէջ մտած էր : Տ. Պէլիէլ իշխանին աչաց առջեւ աներեւակայելի ձեւեր առաւ . Քոյր Ակնեան Աստուգեւս եւ Պէհէրիդէ բնակեալ էր . երբ Օրլէանի իշխանին առջեւ բուրհանը բռնեց, սրբատունին համբուրել կը մերժէր, ինքն իր վրայ ոլորելով կատարեալ շրջանակ մը կը ձեւացնէր, իւր ոտքերն ճակատին կը դպէին, սարսափելի հայհոյութիւններ կ'ընէր : Տ. տը Սադէլի, Սապիւլօն դէւէն բընակեալ էր, որ զայն կ'ստիպէր սեւ մագաղաթանման լեզուն դուրս հանելով եկեղեցիին շուրջը դառնալ :

Լուտէնի Իւլիսէաններն իրենց այս յիմարութեան մէջ կ'ամբաստանէին զՎռանտիէն, ըսելով թէ անկէ կակարդեալ էին . եւ թէ սատանային հետ դաշնագրեր կ'ընքած է, որոց մին Օրլէանի «ապոյէն» կուգար :

Պօրտոյի արքեպիսկոպոսն հրամայեց Կրանտիէն հանդիստ թողուլ եւ կրօնուհիներն խնամել . ասիկայ Լօմպարտօնի գործին չէր գար, որ այս խնդրոյն համար Փարիզ գացած էր, եւ զՎռանտիէն առանց աւագայնոց ժողովին խորհուրդին ու բըննութեան դիմելու, իւր կախարդ պատժելու լիազօր իշխանութեամբ կը վերադառնար : Վռանտիէի պարսաւագիրն պատրաստուած եւ վճիռն գրուած էր եւ Ռիշ-լիէօ իւր վրէժն պիտի լուծէր :

Հակառակ Վռանտիէի բողոքանաց եւ իւր ծեր մօր թախանձանաց՝ ձերբակալուելով բանտարկուեցաւ . սկսան անպացոյցներ փնտռել . քանիցս դիւտահանութիւններ փորձուեցաւ իւր եւ իւր հետ գտնուած դիւտահարաց վրայ . այս նշանաւոր դիւտահանութիւններէն միոյն մէջն էր, որ սատանայէն նամակ մը ստացան . այս նամակը մինչեւ ցայսօր ազգային գրատանը մէջ սահուած է, որոյ լուսանկարն ահաւասիկ ձեզ կը ներկայացնեմ . կը տեսնէ՞ք որ Աստուգեւս կը խոստանայ իւր Վաշիլ եւ Ամանդ բարեկամաց հետ մասնաւորապէս Տ. տը Պէլիէլը չարչարելն :

Քանի մը տախ վերջ դեռ դիւտահանութիւններն որ եւ է արդիւնք ունեցած չէ-

ին, Վռանտիէ խնդրեց անձամբ դեւերն հալածել, հրաման տրուեցաւ, մեծ ժողով մը կազմուեցաւ . Սուրբ Քրուա (Խաչի) եկեղեցիին մէջ խել մը աղօթքներէ վերջ այսակիրներն բերուեցան որը, տեսնելով Կրանտիէի սուրբ խօսքեր արտասանելը, կատղեցան, աղաղակներ բարձրացուցին, կը վազվառկէին, գետինն կը տապալէին : Այն տեսակ աղմուկ մը երբէք տեսնուած չէր : Վռանտիէի դաշնագրերն բերելով կըրտկարանի մը մէջ ձգեցին . այսակիրներն կրկին կատղեցան եւ խեղճ քահանան շրջապատելով կը ձանկոտէին, կը զարնէին եւ վերջապէս ստիպուեցան զայն իւր բանտին մէջ տանիլ : Քանի մ'օր վերջ դատաստանը դումարուելով Վռանտիէն կախարդ հրատարակեցին եւ հրապարակային պատժոյ դատապարտուեցաւ . միայն չափկով մը, գլուխը բաց, չուանը վիզն քեղնուէլէ վերջ, ողջ ողջ պիտի այրուէր, բայց ըստ պատժագրոյն նախ պէտք էր չարչարանաց ենթարկել : Ուստի Վռանտիէի վրայ սատանայական նշանն պէտք էր փնտռել, այսինքն անզգայ կէտն զոր կը ճանչնար . Լօմպարտօնն այս գործողութիւնն կատարելու համար վիրաբոյժ մը չի գտնալով ստիպուեցաւ կալանաւոր մը վարձել : Սատանայական կնիքն մարմնոյն վրայ եւ ոչ մի տեղ գտան : Լօմպարտօնն հրամայեց Վռանտիէի ձեռաց եւ ոտից եղունգներն հանել, յուսալով թէ մի գուցէ դիւթեալ կէտն եղունգներուն տակը գտնուի . վիրաբուժն հնազանդ իլ չ'ուզեց, եւ լալով Վռանտիէէն ներողութիւն խնդրեց մինչեւ այն ատեն ակամայ նորա տուած չարչարանացը համար :

Խեղճ գրպարտեալն չարչարանաց սենեակը տարին ուր դատաւորը գումարուած էին, արեղաներն կոճղի չարչարանաց գործիքներն պատրաստած էին : Սրունքներն երկու տախտակներու մէջ դնելով զայնս կապեցին և ապա երկու սրունքներուն մէջ փայտեայ անկիւններ դնելով մուրճի հարուածներով կը մխէին . առաջին հարուածով կոտրուածքի ձայն մը լսուեցաւ . խեղճ քահանային սրունքներն էր որ կը կոտրուէր : Նա այնպիսի խղճալի կերպով աղաղակեց որ դահիճի դուլթն չարժելով ետ քաշուեցաւ . Լաբբանս արեղան չարչարանաց տեղոյն վրայ նետուելով պօռաց .

« Զա՛րկ , զա՛րկ » . Առանտիէ խելքը զլուսը ժողովելով ըսաւ թէ կախարչ չէ : Դահիճն արտասուպից աչօք անոր չորս հատ անկիւններ ցցուց , զորս ստիպեալ էր մխելու : « Սիրելի բարեկամս , ըսաւ Առանտիէ , փայտէ խուրճ մ'ալ կրնաք մխել » . Թռանքիլ հայրն դահիճն յանդիմանելով՝ նոր միջոցներ ցցուց աւելի շատ ցաւ պատճառելու համար : Եւ որովհետեւ դահիճն դրած ութն անկիւններէն զատ ուրիշ չուէր , Լօմպարտմօն հրամայեց երկու անկիւն եւս պատրաստել : Դահիճն չուարած էր եւ չէր կարող գործադրել . այն ատեն սարսափելի տեսարան մը տեղի ունեցաւ . Լակիթան եւ Թռանքիլ Քախուհիներն իրենց կնդուղներն հանելով՝ մուրճն ձեռք առին եւ կատաղաբար երկու անկիւններ եւս մխեցին : Լօմպարտմօն դուրի գալով հրամայեց դադարիլ . խեղճ քահանային սրունքներն խշիր դարձած էին , սկերաց կտորներն ամէն կողմէն դուրս կ'ելնէին :

Չարչարանքն 3-4 ժամ տեւեց . վերջն Առանտիէն յարգի վրայ պառկեցուցին , մահուան ժամուն սպասելով : Ժամը 4ին սայլակի մը վրայ դնելով Ս . Պետրոսի եկեղեցւոյն առջեւ տարին , ուր պարտէր հասարակութեան աչաց առջեւ փայտակոյտի վրայ այրուիլ : այս հրապարակի շուրջն զըտնուող նստարանաց վրայ նստած էին քաղաքին ամենագեղեցիկ կիներն : Դահիճն զայն գրկելով սայլակին վրայէն հանեց եւ փայտակոյտին վրայ դրաւ : շոն հինգերորդ անգամ իւր վճռադիրն կարգացուցաւ :

Լօմպարտմօն իւր ի դուր շարժած ատենն խոտացած էր նախ խեղդել , եւ ապա փայտակոյտի հրովն վառել . բայց արեղաներն լղկն չուանը հանգուրցելով օդակ ըրած էին , որպէս զի քաջած ատեն չի խեղդուի . արեղաներն՝ դահիճը մէկ կողմ առնելով սկսան Առանտիէն կռիակոծել . ժողովուրդն գրգռեալ ոտքի ելաւ , դատապարտեալը դեռ կը մերժէր իրեն դրապարտեալ ոճիրներն խոտովանելու համար : Լակիթան արեղան փայտակոյտի հուրն վառեց , և նոյն միջոցին դահիճն վազեց չուանը քաշելով զայն խեղդելու համար , բայց ինչպէս ըսի չուանը հանգուցեալ ըլլալուն խեղդելն անկարելի էր :

Քանի մը վայրկեանէն Առանտիէ սկսաւ այրիլ , բոցերուն մէջէն կը տեսնուէր նորա տապալումը : Այն ատեն աղանեաց խումբ մը տեսնուեցաւ , որք եկան Առանտիէի շուրջն դարձան եւ ապա յերկինս թռան . այս երեւակայութեան արդիւնք տեսարանը տարբեր բացատրութիւններ ստացաւ : Ոմանք զայն հրեշտակաց խումբ մը կը կարծէին եւ այլք դիւայ :

Խեղճ քահանային մահը դիւամուրութեան վերջ չի տուաւ , Իւստիւեաններն իրենց յիմար վիճակին մէջ մնացին , մինչեւ որ իրարմէ բաժնելու որոշումն տուին : Քիչ ժամանակ վերջ քաղաքին օրիորդներն գեւերէ բռնուեցան , որոց դիւայ անուներն էին Անմարութիւն , Ածուխ , Դժոխային առիւծ , Ֆէսին եւ Մալսն : Այս համաձայնակ հիւանդութիւնը շրջականներն ալ տարածուեցաւ , շինականաց գրեթէ բոլոր օրիորդներն այս հիւանդութենէն բռնուեցան . երկու քահանայներ իբր կախարչ դատապարտուեցան , բարեբաղդաբար Բուաթուի եպիսկոպոսին օգնականն իմաստութիւն գործեց դիւահարներն իրարմէ զատելով :

Մի եւ նոյն ատեն Ավինեօն քաղաքն եւ Պապի հոգն այսակիրերով լի էր . կը տեսնաք Լուտէնի համաձայնակ հիւանդութեան դաղափարն որչափ հեռուներն իսկ կ'աղդէր . ի հարկէ ստիպեալ պիտի աղդէր նա եւ այս երեւոյթից դերակատարաց վրայ . որպէս փորձն կը հաստատէ , Առանտիէի մահուանէն հազիւ տարի մը ետքն երբ Լակիթանս , Թռանքիլ եւ Սիւսէն հայրերն կատարեալպէս յիմարացան , ինքզինքնին դեւերէն բնակեալ ըլլալ կը կարծէին . մի եւ նոյն վիճակին հասան նաեւ չարչարանաց ներկայ գտնուող վիրաբուժն եւ դատաբանի նախագահն որք ամէնն ժողովուրդէն արհամարեալ եւ թշուառ մեռան :

1642ին Լուտէնի համատարածութենէն վերջ Լիւվիէի մէջ նոր համատարածութիւն մ'սկսաւ նման առաջնոյն որոյ պատմութիւնն հարկչեմ համարիւր ընել միայն բաւ կը համարիմ ըսել թէ երկու քահանաներ իբր կախարչ դատապարտուեցան . նախ Փիկառ ժողովրդապետն եւ ապա Թօմմայ փոխ-ժողովրդապետն : Փիկառ ժողովրդապետի մահուանէն հինգ տարի վերջ նորա մարմինն գերեզմանէն հանելով դատեցին . Թօմմայ

իւր գործակցին հոտած մարմնոյն հետ կապելով երեսի վրայ փողոցէ փողոց քեղնուելէ վերջ ժան տ'Սրբին այրուած տեղն ողջ ողջ այրուեցաւ :

Լուգովիկոս 14րդի կը պարտինք կախարդներու դատապարտութեան վերջաւորութիւնը . 1682ին կնքուած եւ Քօլպէնէ խմբագրեալ հրովարտակով մը գրեթէ կ'ապացուցանէ կախարդութեան չգոյութիւնն եւ զայնս հասարակ դատաստանաց կը յանձնէ : 18րդ դարուն մէջ կախարդութեան վերաբերեալ դատերը դատաստաններու ներկայանալն իսկ արգիլուեցաւ , որպէս նա եւ այս նկատմամբ հրաշատեղիներն փակուեցաւ բարձրագոյն հրամանաւ :

Մեր մեծ յեղափոխութեան օրէնքն (1791 յուլիս 22) կախարդներն դաւաճանաց եւ կամ յիմարաց կարգն կը դառնէ , եւ զայնս ըստ այնմ կամ յիմարանոցներու մէջ դնել եւ կամ պատժական ատենին յանձնել կը հրամայէ : Կախարդներն ուրիշ բաներ չէին բայց եթէ յիմարներ եւ բանդագուշներ եւ այս օրուան մեր հիւանդներուն մէջ գտնուածներուն նման մեղամաններ :

Բայց ո՞ր են այս օրեայ այսակիրներն . միթէ մարդոց այլ եւս գեւերու չի հաւատալէն ի վեր , այս յիմարութիւնն անհետացած է , միթէ այս հիւանդութիւններն ջնջուած են : Ոչ , պարոններ , այսակրութիւնն այսօր առաջնական չափ կը գտնուի , միայն անոր ուրիշ անուն մը կուտանք , որ է որովայնախթային վերնոտութիւն (hystéro-epilepsie) :

Ներեցէ որ ձեզ նկարագրեմ այսօրեայ այսակիրներն եւ որովայնախթութեան (hystérique) հիւանդութիւնն : Այս հիւանդութեան ենթակայ եղող խեղճն ուրիշ արտաքին նշանով չի ճանաչուիր բայց եթէ իւր ընթացքի տարօրինակութեամբ . այս հիւանդութեան ենթակայ եղողները , տեսակնին տարբեր կերպով տեսնել կը կարծեն , ինչպէս ճերմակը սեւ , կամ սեւը ճերմակ , ինչպէս եւ հագուստներն ալ տարբեր եւ ձեւափոխեալ կը տեսնուէր : Որովայնախթութիւններու մարմնոյն մէկ կողմն անգոյ է , զոր եթէ խոցես , այրես եւ կտրես ինք ցաւ մը չի զգար . այս մասերն այնչափ քիչ ուսուցեալ են արեամբ որ եթէ կտրես իսկ արեան կաթիլ մը չ'ենէր . ասիկայ մեզ հա-

մար կարեւոր է , կը բացատրէ կախարդաց դիւական նշանն :

Կան որովայնախթներ , որոց մարմնն բոլորովին անզգայ է , այնպէս որ եթէ չարչարուի իսկ բան մը չ'զգար : Այս կարգի հիւանդներ տեսնելու բարեբաղդութիւնն ունեցայ , որոց մարմնն այրած ատեն իսկ բոլորովին անտարբեր կեցած էին , որովհետեւ բան մը չ'էին զգար . ահաւասիկ կրկին անգամ կախարդութեան մի նշան . կը յիշէր որ չարչարանաց ատեն երբեմն չ'էր իսկ աղաղակեր եւ զոր դիւաբաններ լուծեան հրապոյրն կ'անուանէին , որպէս թէ իրենց դեւն նոցա ցաւերը կը ջնջէր : Մենք այսօր զայն որովայնախթութեան կատարեալ անզգայութիւնն կ'անուանենք :

Որովայնախթներու ցաւն մերթ ընդ մերթ կը բռնէ եւ պիտի տեսնաք որ այսակիր մը բուրհանի մեծ նմանութիւն ունի :

Բուրհանի ըմբռման գալուստն նախնական նշաններով կը ծանուցուի . հիւանդն յանկարծ զանգակի ձայներ կը լսէ , գլուխին մէջ գըղգուումներ կ'ըլլան , ամէն ինչ իրեն չուրջ կը դառնան : Այս դալիաւոր վիճակն մի քանի ժամեր եւ երբեմն ալ մի քանի օրեր կրնայ շարունակուիլ . սպա վիզն կ'ուռենայ , շնչարգելութիւն կ'զգայ , որ կոկորդի ջղանց ձգտումէն առաջ կուգայ : Հինաւուրց այսակիրներն մի եւ նոյն նշաններն ունէին . ըստ դիւահանից , դեւն այսակիրին կոկորդն կ'ենէր , զոր այսօր մենք որովայնախթութեան դնդակն (boule hystérique) կ'անուանենք :

Որովայնախթներն երբ այս ամէնն ըդգան , գիտեն որ իրենց բուրհանն պիտի գայ , պատրաստութիւններ կը տեսնեն , իրենց անկողիններն եւ զգեստներն կը շտակեն , նոյն իսկ շատ անգամ գիրենք հսկողէն կը պահանջեն բուրհանի ժամանակ գիրենք կապելու գործիներն : Այսակիրներն ալ մի եւ նոյն նախնական նշաններն կ'զգային , կը ծանուցանէին իրենց դեւին գալուստն եւ կը գուշակէին իրենց ցաւի ըսկըսին :

Բուրհանը խել մը երեւոյթներէ կը բաղկանայ , որոց նկարագրութիւնը պարտինք Պ. Շառքօ դատաստելին որ իւր աշխատութեանց եղբակացութիւնն է :

Առաջինն . ձգտական երեւոյթներուն .

որովայնախեթն եթէ ոտքի վրայ կանգնած է, իւր շուրջն կը դառնայ եւ ճիշդով յանկարծ գետինը կ'իյնայ. անդամները կարկամեալ են, աչքերը կը դառնան, ոտքէն մինչ ց'գլուխ կ'սկսի դողդոջել, լորձուներն բերնէն կը վազէ. ահաւասիկ տախտակին վրայ բուրհանի այս առաջին շրջանին մէջ հիւանդաց լուսանկարներն. կը տեսնէք ինչպէս ձեռքերն դէպի ետեւ դարձած են, կը մտաբերէք 1667 դարու այն պատկերը, որ ձեզ կը ցուցնէի քիչ մը առաջ, կը տեսնէք որ նմանութիւն կայ հին դարուց կախարդուհիներուն եւ ներկայ հիւանդներուն մէջ:

Այս երեւոյթէն քիչ մը վերջ որովայնախեթն պնդացեալ բերանը բաց կը կենայ, մատերն կարկամեալ, յիշողութիւնը բոլորովին կորսնցուցած, թիկանց մկաններն կը ձգտին, այնպէս որ խեղճ կնոջ մարմինն աղեղնաձեւ կ'առնէր մը կը կազմէ եւ միայն իւր կրունկին եւ ծոծրակին վրայ կը հանդէս: Այս յիշէք Լուսէնի այսպիսիներն որք մի եւ նոյն ձեւն կ'առնուին:

Երկրորդ շրջանին մէջ անդամներն սաստկապէս կը դողդոջեն, դէմքն սարսափելի ձեւեր կ'առնէ, որք միշտ կը փոխուին. ըստ հին դիւահանից բնակեալ դեւերն կուգային այսահարին երեսին իրենց տիպարի ձեւն տալու:

Այս ձկտման շրջանի երկու երեւոյթներն երկար չեն տեսեր. այս միջոցին մէջ շնչառութիւնն տեղի չ'ունենար, յետոյ պահ մը թոյլ կուտայ, հիւանդն մեռեալի կը նմանի եւ կ'սկսի խորդալով շնչել, քանի մը վայրկեան հանգստանալէ վերջ, զարհուրելի ճիշեր կ'արձակէ, և երրորդ կամ մեծ շարժմանց երեւոյթը կ'սկսի:

Այս երեւոյթին վրայ գաղափար մ'ունենալու համար, ներկայ գտնուած ըլլալու է. այս նկատմամբ ինչ որ ալ ըսեմ կրկին իրողութիւնն չի պիտի կարողանամ բացատրել: Որովայնախեթն յանկարծակի ոտքի կ'երնէ, կարծես զսպանակ մը զինքն կը հըրէ, մարմինն օդը կը նետուի, վարկ'իյնայ, կրկին կը նետուի, կրկին կ'իյնայ եւ այսպէս քսան անգամէն աւելի շարունակաբար առանց հանգչելու: Այս մեծ շարժմանց երեւոյթը տեղի ունէր այսակրաց համար.

ըստ դիւահանից դեւն էր որ բազմիցս զայն օդը կը նետէր եւ վար կը ձգէր:

Նիւրին է երեւակայել, թէ այս մեծ շարժմանց երեւոյթն չէր կրնար երկար տեսել, վայրկեանէ մը վերջ որովայնախեթն մեռելի նման դետինը կ'իյնայ, եւ քանի մը վայրկեան անշարժ կը մնայ:

Երբեմն ասիկց վերջ գերմանց երեւոյթներ տեղի կ'ունենան որ մեզ համար մեծ կարեւորութիւն ունին. քննենք նոցա մի քանիներն: Յանկարծ հիւանդին փորն կը բարձրանայ, ոտքերը գլուխին կը մօտենայ, այսպէս կ'առնար մը կը կազմէ. կը յիշէք որ Լուսէնի մէջ Տ. տը Պէլիէլի այս ձեւն շատ կը պատահէր: Երբեմն հիւանդը փորին վերայ կը պառկի, իւր մարմինն կը կորանայ, այնպէս որ ոտքերու մատերն գլուխին կը դպնին. շատ անգամ դիւահարներն դիւահանաց առջեւ մի եւ նոյն ձեւն կ'առնէին: Երբեմն գերման միայն մէկ կողմին վրայ կ'ըլլայ, մարմինը կողմնական կերպիւ կը կորի: Երբեմն միայն ձեռքերն ու ոտքերն կը ձգտին. դիւահանից դրեանց մէջ այս ամէն օրինակներն կրնանք գտնել: Շատ անգամ ալ գերման միայն լեզուին եւ երեսին վրայ տեղի կ'ունենայ. հիւանդին դէմքը սարսափելի ձեւ մը կ'առնէ, երեսի դեմքն ձգտեալ են, լեզուն սեւ եւ չոր դուրս կ'ելնէ բերնէն. զայս ամէն դիւահաններն ալ կը նկարագրեն: Երբեմն հիւանդին թեւերը միայն այնպիսի կերպով մ'կը ձգտին որ հիւանդն խաչեցեալի մը ձեւն կ'առնէ. ասիկայ երբեմն դիւահարներու վրայ ալ կը տեսնուէր. բայց ընդհանրապէս ապուշներու եւ ջղաճիգներու յատուկ է: Ահաւասիկ ձեզ կը ներկայացնեմ Սալբերթիէուի հիւանդանոցին մէջ պատահած երեք հիւանդաց խաչեղաձեւ գերման լուսանկարներն: Գերման վերջ եւ կամ եթէ տեղի չ'ունենայ մեծ շարժմանց շրջանէն անմիջապէս վերջ կը յաջորդէ բանդադուշանաց եւ կերպարանիչ ձեւափոխութեանց շրջանն:

Ասիկայ բուրհանի ամէնանշանաւոր մասն է. հիւանդն քանի մը վայրկեան հանգըտանալէ վերջ, ոտքի կ'երնէ, յիշողութիւնն կորսնցուցած է, ո՛չ կը տեսնէ եւ ո՛չ կը լսէ, բանդադուշանաց միջատեալ զառանցում մը կ'սկսի. մի եւ նոյն հիւանդին համար միշտ մի եւ նոյն խօսքերն են որք իւր

զբաղմանց եւ յիշողութեանց կը վերաբերին : Ըստ զիւսքանից այս ատենն է որ այսակիրն իւր դեւն կը տեսնէ . մեր որովայնախեթերն ալ իրենց դեւն կը տեսնեն , բայց անուանին փոխուած է : Սալբէթօնիէն հիւանդներն կրօնուհիներն չ'են , այլ շինականներ . իրենց դեւերն Բէհէմօֆտ կամ Ազմատեւս չ'են անուանուիր , այլ դարին հետ կը փոխուի : Երկու անգամ միայն տեսայ որ Ալֆօնս կ'անուանուէր :

Քննենք բանդագուշանքներէն մին : ահաւասիկ Լուիզ Յ . . . անուանեալն՝ դեւման ժամանակէն անմիջապէս վերջ կը տեսնէք որ իւր անկողնոյն վրայ կը վազէ , դէմքը բարձի տակ կը ծածկէ եւ ճշելով կ'ըսէ , թէ սեւ մարդ մը իրեն կը հետեւի , ուրիշներ օգնութեան կը կոչէ . կը տեսնէք դէմքը որչափ սարսափելի է , բարկութեամբ իւր վրայ յարձակողն կ'արհամարհէ . . . : Յանկարծ տեսարանն կը փոխուի , իւր ընտանի դեւն կը հասնի , մեծ ընդունելութիւն կը գտնայ (դեւն) , հիւանդն քաղցր նուազ մը կը լսէ , կը ծաղրէ իւր վրայ յարձակողն , այսպէս քանի մը վայրկեան քաղցր յափշտակութեամբ բանդագուշակէ վերջ ա՛մէն ինչ կը լրանայ :

Ահաւասիկ Սէլին Մ . . . տխուր բանդագուշանքով մը կ'սկսի , իբր թէ սեւուհի մը կը տեսնէ զոր խեղդելով նորա մորթն կը քերթեն . տեսէք այս լուսանկարին վրայ , թէ դէմքն ինչ սարսափելի ձեւ առած է . օգնութիւն կը կոչէ , մարդ չի հասնիր . . . դէմքին երեւոյթն իւր բանդագուշանաց համեմատ կը փոխուի :

Ահաւասիկ ուրիշ պատկեր մը , որ կը ցուցունէ այս հիւանդին փոփոխութիւնն հիւանդն խնդում երես է եւ կը ժպտի առաջնոյն նման : Որովայնախեթից եւ կամ այսակիրաց բուրհանն երբեմն բազմիցս կը կըրկնուի միեւնոյն եղանակաւ կամ փոխուած :

Շատ անգամ բուրհանէ վերջ , երբեմն ալ բուրհանէ դժուր որովայնախեթ կը զանանցէ , որպէս երբեմն կախարդներն եւ այսակիրներն , մութ անկիւն մը քաշուելով կ'արտասուէ , երբեմն օրեր կը չարունակուի այսպէս եւ երբեմն ալ հերարձակ , կիսամերկ , սրահոց եւ ձեմելեաց մէջ կը չըջի :

Կը տեսնենք որ որովայնախեթից նկարագրութիւնն , կախարդաց եւ այսակիրաց

նկարագրութեան կատարելագէս կը համապատասխանէ . որովայնախեթութեան բուրհանն համատարածութեամբ կը ճարակուի . բազմաթիւ որովայնախեթաց միեւնոյն պահուն մէջ գտնուած ատենն եթէ միայն միոյն բուրհանն բռնէ , միւսներուն ալ կը բռնէ մի եւ նոյն ժամանակի մէջ . ասիկայ ալ կը տեսնուէր մենաստանաց մէջ :

Կախարդներն հիմայ չ'են պակիր . մի քանի տարի առաջ Սալբէթօնիէն մէջ որովայնախեթ մը կար , որ կը պնդէր , թէ ա՛մէն դիւեր , հիւանդանոցի բժիշկներէն մին եւ ես պատի մը մէջէն ելնալով սրահը կը մտնէինք . եթէ ասիկց երկու դար առաջ լուէր ասիկա , իմ վարպետս եւ ես , միայն տակոյտի ծանօթութիւնն ըրած պիտի ըլլայինք . բայց բարեբաղդաբար ամէն ինչ փոխուած է այսօր , ո՛չ կախարդաց եւ ո՛չ դիւաւորաց կը հաւատան . նոյն իսկ դիւահանութեան առանձնաշնորհութիւն ունեցողներն լուռ կեցած են , որ հաւանականութեան նշան մ'է :

Հոս կը վերջանայ բանախօսութիւնս , բայց ներեցէք որ կրկնեմ ինչ որ կ'ըսէի ըսկըսած ատենի :

Մարդ զարհուրանօք եւ զզուանօք կը կարդայ եւ կը պատմէ կախարդութեան պատմութիւնն . բայց միթէ մեր մտայ մը խիթարանք մը չ'է , երբ կը տեսնենք որ գիտութիւնն ամէն վայրկեան մեզ բացատրութիւններ եւ բարութիւններ կ'ընծայէ : Երեկուան ելեկտրական հանդէսը ձեզ կը ցուցնէր թէ Աստուծոյ կայծակներն մարդկան ձեռքն ընկած են , որը նովաւ լոյս , եւ ջերմութիւն կ'արտադրեն , թղթակցութիւններ կը կատարեն , եւ նուազներ կը հնչեն . այսօր բժշկութիւնն եւ բնախօսութիւնն ձեզ կ'ուսուցանէ , թէ հին առուրց դիւահարներ եւ կախարդներ զերծ են դժոխաշին հանգամանքներէ . փայտակոյտն ջրաբուժութեան (hydrothérapie) վերածուած է , եւ չարչարողն ալ ներքին հիւանդապահի :

Կարելի է այս գաղափարներն ձեր քունին մէջ ձեր միտքն իյնան եւ ձեզ զերծ պահեն դէպ երազներէ եւ մղձաւանջներէ , որով այսու կ'արժանանամ ձեր ներողութեան :

Փ . ՌԵՅՆԱՌ

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(ՎԵՊ ՏՓՂԻՍԻ ԿԵԱՆՔԻՅ)

ԺԶ.

Խ Ո Ս Տ Ո Ւ Մ

Նիկիօլան համարեայ քաշում էր իւր հետ շնչասպառ Վարդուհիին :

—Ո՛ւր ենք գնում, Նիկիօ՛ւ, հարցրեց խեղճ աղջիկը :

—Գնանք մի առանձին տեղ, մի սենեակ . . . խօսինք այնտեղ :

Եւ նորա մտան Երեւանեան հրապարակը :

Հրապարակի աղմուկը, կառքերի, ձիաբարձ երկաթուղւոյ դղողիւնը, խառնուելով գինետուններից դուրս ժայթքող խառն ի խառն աղաղակների հետ, օդը լեցնում էին աններդաշնակ շշուկով. միայն այնտեղ է Տիկիսիում, որ ամբոխը միշտ խռնուած է եւ կենդանութիւն է տիրում. բազմաթիւ սրճարանների վերնայարկներից լսվում են նուազածութեան եւ վրացերէն երգեցողութեան ձայներ. նոցա ներքին յարկի խանութներից, կանաչ եւ պտուղ ծախողները ամէն լեզուով գովում են իրենց ապրանքները. կշիռների պղնձեայ թաթերը զողանջիւն են արձակում տախտակեայ կաշանքի վրայ ընկնելով, մասվածառների տապարները թրխվում են կոճղի վրայ հաղուստ ծախողների յաճախող կանչելու սուր ձայները դերազանցում են բոլորին, եւ այդ աղմուկների միջից սլանում են կառքեր, լսվում է թրամվայի զանգակի ձայնը, իսկ գինետուններից Բաքուի պաշտօնեայք շնորհակալութիւն են յայտնում դինու չաստուածին երգելով «մաալօ բելիվար, մաալօ բելիվար» (*). . . :

Ճրագները արդէն վառվում էին, անցուդարձը վերի կողմից դէպի վարն էր ժողովուրդ եւ Նիկիօլ ու Վարդուհին ներս մտան

հրապարակի վրայ նայող Եւրօպիոյ հիւրանոցում, որը այժմ չկայ :

—Մի սենեակ մեզ, գոչեց Նիկիօլը նշանադրեստով ծառային, որը վերցրեց պատից կախուած մի բանալի եւ առաջնորդեց նոցա դէպի վեր մի խորամանկ ժպիտ ունենալով դէմքի վրայ. այդպէս այցելուներ նա շատ էր տեսել :

Երբ բարձրացան վերի յարկը, ծառան դարձաւ դէպի Նիկիօլը եւ հարցրեց ժպիտով.

—Բանի՞ մահճակալով սենեակ էք ուղում :

—Բայ արա մի սենեակ, մի եւ նոյն է, մենք գիշերը չենք մնալու :

—Գիտեմ, միմուաց ծառան քթի տակից եւ թիւ 10ի դուռը բաց արաւ :

Նիկիօլան քաշեց Վարդուհին, ներս մըտաւ, դուռը սեղանութեամբ կողպեց ետեւից եւ կրքից դողողալով թողեց Վարդուհիին թեւը :

—Ինչո՞ւ եկանք այստեղ, հարցրեց աղջիկը վրդովուած :

—Առանձին լինելու համար :

—Բայց կարող էինք այգիում եւս առանձին տեղ դառնել :

—Վարդուհի՛ . . . գոչեց Նիկիօլը խապոտ ձայնով եւ աղջկան իւր գրկի մէջ առնելով կատաղաբար սեղմեց իւր կրծքին —դու ինձ չե՞ս սիրում :

—Ա՛հ, Նիկիօ՛ւ, կասկածո՞ւմ ես, ինչո՞ւ ուրեմն եկայ քեզ հետ :

—Ա՛հ, ների՛ր, ների՛ր, չը գիտեմ ինչ եմ խօսում :

—Ցուգուած ես, սիրելի բարեկամ, նստիր փոքր ինչ :

Նիկիօլը նստեց մահճակալի վրայ եւ նրստեցրեց կողքին աղջկան, բռնեց նորա ձեռքերը, կրքից արիւնով լեցուած աչքերը պահ մի վախեցած Վարդուհիի աչքերին սեւեռեց եւ ապա մոնչեց :

—Ա՛հ, Վարդուհի՛, կատաղեցնում ես ինձ . . . սքանչելի ես :

—Նիկիօ՛ւ, վախենում եմ . . . մրմնջեց խեղճ աղջիկը դողողալով :

—Ինչո՞ւ, հարցրեց զարմացած Նիկիօլը :

—Չը գիտեմ, բայց վախենում եմ, աչքերդ սարսափելի են :

(*) Այդ բառերը մի երգի կտոր է, մի երգ, որը այնչափ ընդհանրացած է վրաստանի մէջ, բոլորը նշանակում են «շնորհակալութիւն, շնորհակալութիւն» :

Նիկիօլը զսպեց իրեն եւ պահ մի աչքերը
փակելուց յետոյ բաց արաւ :

— Նայի՛ր այժմ, ասաց նա — այժմ
լի՞նչպէս են, սարսափելի՞ են նորէն :

— Դու իմ կիներն ես, ասաց Նիկիօլը —
ես երդւում եմ որ քեզ հետ կ'ամուսնա-
նամ, ոչ ոք չէ կարող իմ սիրտը խլել ինձ-
նից, նա քոնն է :

— Ահ, շնորհակալ եմ, իմն Նիկիօլ :

— Ասա « ամուսինս » :

— Ա. . . մու. . . սինս, արտասանեց վար-
դուհին, բայց իսկոյն գունաթափուեց եւ
դողաց . այդ բառերը առաջին անգամ նո-
րա բերնից դուրս էին գալիս :

— Ահա՛ իմ կիներս . . . իմ սիրուն կիներս,
իմ սքանչելի տիրուհիս . . .

Եւ երկտասարդը գրկեց նորան իւր
սրտին :

Պահ մի յետոյ վարդուհին, յաղթա-
կան եւ զուարթ դէմքով Նիկիօլի թեւին
կոթնած, ցած էր իջնում հիւրանոցից :

ժ.է.

ՀՈՒՓՍԻՄԵՒ ՎՐԷԺԻՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Բայց այդ միջոցին « Էլզօրադօ » այգի-
ում մի ուրիշ դէպք էր պատահում : Դերա-
սանները բոլորը ժողովուրդ էին, նախ ըստ
սովորութեան փոքր ինչ խօսել եւ երգել
էին եւ ապա լսելով Պէտրդի տասերորդ
անգամուայ աղաչանքներին, նստել էին փո-
ծի, բայց վա՛յ այն փորձին . դերասաններն
իրենց դերերը չէին սովորել եւ եթէ պատ-
ուարժան արիւն քրտինք մանող յուշարարը
չը լինէր, անշուշտ բոլորն էլ արձանացած
կը մնային :

Հեռու, անցաւ այն ոսկեղարը, երբ
Պ. Աբամեան, Մնակեան եւ պոլսեցի օրի-
որդ Գարադաշեանները օրական մի ներկա-
յացում էին տալիս եւ իրենց զերերը միայն
մի անգամ կարգալով սովորում էին : Շատ
անգամ իսկ, երբ յուշարարը չէր հասցնում,
իրենք արդէն քա՛ջ ծանօթ լինելով թառ-
րերգութեան հետ, հնարում էին եւ երբեք
չէին խառնում կարգը : Անցա՛ւ այն գեղե-
ցիկ երեկոյները, երբ օրիորդ Գարադաշ-
եանը իւր հիանալի ձայնով, սքանչելի խա-
ղով արձանեցնում էր ժողովրդեան, ամէնքս

շունչներս պահում էինք մի խօսք իսկ չը
կորցնելու նորա շնորհերից, մի կտորն իսկ չը
կորցնելու Ադամեանի եւ Մնակեանի շար-
ժաւածներին . այժմ միայն կային դերա-
սաններ, որոնք թատերգութեան ինչ լինելը
իսկ չը գիտցած բեմ էին դուրս գալիս եւ
զղուեցնում բոլորին :

« Օսկան Պետրովիչ » ը սկսեցին փորձել,
բայց հազիւ թէ այն տեղն էին հասել, երբ
սատանաները թռչում են Օսկան Պետրովիչի
ուսերի վրայ եւ նորան դժուրք են կամե-
նում տանիլ, որ սրա՛նք մտաւ մի ոստիկան
եւ փորձն ընդհատուեցաւ . Գէորդը, որը
ինքը Օսկան Պետրովիչն էր, ցած թռաւ բե-
մից եւ ոստիկանին մոտեցաւ :

— Պ. Սունդուկեանը, սկսեց ոստիկանը
— խնդրել է մեզ արգիլել ձեզ իւր հեղի-
նակած թատերգութիւնը խաղալ եւ մենք
պաշտօնապէս այդ արգելում ենք :

Բոլորը աւշած մնացին, իսկ ոստիկանը
դուրս գնաց :

Գէորդը իւր ամենայն ուժով սկսեց Տէր
— Դաւթեանին հայհոյել, սրա՛նք մի բուպէ
այն կերպարանքն ստացաւ, ինչ կերպարանք
որ ստանում են մեր ժողովուրդը, երբ պա-
րոն անդամներից մէկն այն ինչ պարոնի
կարծիքին հակառակ է խօսում, սկսում է
կռիւ եւ ժողովն ընդհատվում է :

Այդպէս էլ եղաւ փորձի հետ եւ տաս
բուպէից յետոյ դերասանները ցրուել սկսե-
սին, տիկին Հռիփսիմէն շտապեց մի կառք
նստիլ եւ տուն գնալ Նիկիօլին սպասելու .
ժամագրութեան դեռ եւս մի ժամ կար,
իսկ այդ միջոցին Նիկիօլը հիւրանոցից դուրս
էր հանում թոյլ վարդուհիին, կառք նըս-
տեցնում նորան եւ հրամայում էր կառա-
վարին կանիւննայեա քշել :

Հռիփսիմէն նստեց իւր լուսամուտի վը-
րայ, որտեղից փողոցը տեսնվում էր եւ
այնտեղից սկսեց նայիլ թէ ե՞րբ կը գայ Նի-
կիօլը :

Մի կառք կանգ առաւ դրան վրայ եւ
որովհետեւ Տիֆլիսի բոլոր կառքերը բաց
են, Հռիփսիմէն վերից տեսաւ նորա մէջ մի
կլասիքական գրիմազլօնի հագուստով երի-
տասարդի եւ մի Գայլանեանի դպրոցի ա-
շակերտուհւոյ . նա սարսաւ :

— Ո՛վ են սոքա, միմեաց, արադութեամբ
եւ ոտի ծայրերով ցած իջաւ եւ հասաւ

սանդուղիների ստորոտը այն միջոցին, երբ Նիկոլը եւ Վարդուհին անցնում էին դրան մօտ դրուած կանթեղի առջեւից :

Հռիփսիմէն ցատկեց ճանաչելով նոցա, ուղեց գոռալ, բայց ձեռքը բերնի վրայ դրաւ, չըթռնըները կծեց եւ լռեց :

Նիկոլը միայն թոթուեց Վարդուհւոյ ձեռքը, թողեց նորան բակի մէջ տեղ եւ թռնելով կառքի մէջ, կառքը սրարչաւ մեկնեցաւ :

Վարդուհին բռնրոյին թոյլ զգալով իրեն, կռթնեց մի ծառի, սրբեց ճակատի պաղ քրտինքը, ուղեց քայլել, բայց անկարող եղաւ, ուստի ստիպուեց նորէն սպասել մի փոքր հագստանալու համար :

Այդ միջոցին զգաց, որ մի ձեռք մթան միջից ընկաւ իւր թեւի վրայ, դարձաւ եւ մի ճիշ արձակեց :

—Տիկին . . . գոչեց նա վախեցած եւ գունաթափուեց :

—Ես եմ, ասաց Հռիփսիմէն խստութեամբ, տուր ինձ թեւդ :

Վարդուհին մեքենայօրէն հնազանդուեց նորան, Հռիփսիմէն քաշեց նորան իւր հետ, բարձրացրեց սանդուղիներից, մտցրեց իւր սենեակը եւ թոյլ տուաւ խեղճ աղջկան ընկնել մի բազկաթուռի մէջ :

Նորա միմեանց երես նայեցին, երկուսն էլ սաստիկ գունատ էին, իսկ Հռիփսիմէի աչքերը կատաղութիւնից եւ նախանձից սաստիկ շիայլում էին :

—Ա՛հ, գոչեց նա—ինչո՞ւ ես գունաթափ, ո՞ւր էիր, ո՞րտեղից եկար :

Վարդուհին առանց պատասխանելու, դէմքը ձեռքերի մէջ ծածկեց :

—Ձե՞ս պատասխանում, գոչեց Հռիփսիմէն. գիտե՛մ, յարեց դառնութեամբ, դու անձնատուր եղար, հա՛, հա՛, հա՛, օրիորդ, ո՛չ տիկին Վարդուհի, համեստ օրիորդ . . .

—Ա՛հ, տիկին, սպանում էք ինձ, ասաց Վարդուհին եւ սկսեց լաց լինիլ :

—Ո՛ւշ, ո՛ւշ, միմեաց Հռիփսիմէն աւտամեքէնը կրճատեցնելով—ո՛ւշ ես լաց լինում . . . անպատիւ ես, կի՛ն ես այժմ եւ շուտով մայր կը լինիս . . . եւ Նիկոլից . . . ա՛յն երիտասարդից որին ես սիրում եմ. ա՛հ, եթէ դու թոյլ չը լինէիր, ես քո արիւնդ կը լսէի այժմ, յարեց նա եւ բուռեքը սեղ-

մած յառաջացաւ դէպի Վարդուհին, կատաղութեամբ սեղմեց նորա ուսը եւ գոռաց. —Յափշտակեցի՞ր Նիկոլին, տիկին, յափշտակեցի՞ր սիրողիս . . .

Վարդուհին մի ճիշ արձակեց եւ նուազեցաւ բազկաթուռի մէջ :

—Ա՛հ, նուաղում ես, մեռի՛ր, աւելի լաւ է, մենչեց Հռիփսիմէն, ձեռները մօտեցրեց նորա կոկորդին, բայց մէկէն ի մէկ կանդ առաւ եւ

—Ո՛հ, ասաց, սա մարդասպանութիւն կը լինի, սա վա՛տ վրէժ է, ես աւելի լաւ կը գտնեմ . . . ես նորա բարոյական կեանքը կը սպանեմ . . .

Նա մօտեցաւ սեղանին, լեցրեց մի գաւաթ ջուր, ցանեց Վարդուհւոյ երեսին եւ բոլորովին հանդարտ կերպարանք ստանալով կանգնեց նորա մօտ . . . Վարդուհին սկսեց ուշքի գալ . . .

—Ա՛հ, գոչեց նա —խղճացէք ինձ :

—Խղճա՞լ, ծիծաղեց Հռիփսիմէն—ժամադրութիւնս խլեցիր եւ խղճա՞լ քեզ :

Ապա բռնեց նորա թեւից եւ ասաց.

—Գնանք, տիկին, տանիմ ձեզ ձեր տունը :

—Տիկին, գոչեց Վարդուհին աղաչական ձայնով —մայրս . . .

—Մի՛ վախենաք, ասաց Հռիփսիմէն—ձեր մայրը այսօր ոչինչ չի խմանալ, իսկ վաղը ձեր եւ իմն է. դուք խլեցիք ինձնից իմ սիրողին, պայքարի առաջին եւ գլխաւոր քարը դէպի ինձ ձգեցիք, գնանք, ես ձեր նետած քարով ձեզ կը ջախջախեմ :

Եւ նա քաշեց նորան, ցած տարաւ, մօտեցրեց նոցա դրան եւ ասաց.

—Այժմ ներս մտի՛ր, բարի գիշեր . . .

Իսկ ինքը, երկու ոստիւնով բարձրացաւ իւր սենեակը, ընկաւ մահճակալի վրայ եւ խօսեց կատաղաբար.

—Յափշտակե՞լ, այն միջոցին երբ ես սիրուց կատաղած կիրք էի պահանջում, բաւականութիւն . . ., իսկ սա—այս թշուառը յափշտակեց ինձ նորան. լա՛ւ, ես ցոյց կը տամ, որ ես կի՛ն եմ . . . տեսներ . . . ես վրէժս կ'առնեմ, թող չը պարծենայ, որ կը մոռանամ . . . ա՛հ, լա՛ւ յիշեցի, այո՛, այո՛—դէպի անառականոց, այնտե՛ղ է նորա տեղը :

Իսկ Վարդուհին ներս մտաւ եւ մօրը

յայտնելով, որ սաստիկ հիւանդ է, իսկոյն անցաւ միւս սենեակը, ընկաւ մահճակալի վրայ, դէմքը բարձի մէջ ծածկեց եւ լաց եղաւ դառնութեամբ։ զգաց որ խաբուել էր Նիկողից։

ԺԸ.

ՀՈՒՓՍԻՄԷԻ ՎՐԷԺԻՆԴԻՆԻՍԻՆԻՆԵԼ
(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ)

—Արտեմ Մասէյի՛չ, մտածեցի՞ք ինչ որ խօսեցինք։

—Այո՛, Սիմոն Գասպարի՛չ, մտածեցի, բայց մի՛շտ դժուար է։

—Ուրեմն մեր գործը վերջացա՞ւ, այլ եւս գործ չ'ունի՞նք միմեանց հետ։

—Վա՛, չէ՛, ես բոլորովին չեմ քաշվում, բայց...

—«Բայց» չը կայ, այսօր պատասխան կ'ուզեմ, այո՛ կամ ոչ։

Արտեմ Մասէյիչը սկսեց ձեռներով խաղալ չիոթութիւնը ծածկելու համար։

—Գիտե՞ս ինչ, Սիմոն Գասպարի՛չ, դարձաւ նա վաճառականին, մի քանի օր էլ ժամանակ կ'ուզեմ մտածելու։

Սիմոնը երեկոյեան տուն դառնալու միջոցին իմացաւ որ Վարդուհին հիւանդ է, իսկ առաւօտեան մեկնելուն, նորա հիւանդութիւնը աւելի ծանրացել էր, ուստի պէտք էր շտապել, ասլրանքը թաթի մէջ ձգել - առնողի ձեռքը եւ ապա այնտեղ մեռնէր իսկ - հոգ չէր՝ այդպէս էլ մտածեց Սիմոնը եւ միւս օր իսկ մտաւ Մասէյիչի խանութը, մտադրելով այդ օր անսպառ ճաշ վերջացնել եւ միւս օր նշանադրէքը անել։

—Արտեմ Մասէյի՛չ, ասաց նա - ուրիշ ուզող էր եկել երէկ, ի՞նչ անեմ։

—Վա՛, ասաց Մասէյիչը - ճշմարիտ, եկե՞լ էր։

—Չը, ի՞նչ է, կասկածո՞ւմ ես, տգեղ եւ աղքատ աղջիկ է, որ ուզող չ'ունենայ հրեշտակի պէս սիրուն է, ուսումնական և 2000 մանէթ օժիտով։

—ձիշդ է, աղպէ՛ր, քո Վարդուհիդ սիրելեմ ես։

—Ուրեմն վերջացնենք...

—Ձի՞ լինիլ որ երեկոյան պատասխան տամ։

Այլ եւս լարը ձգել անկարելի էր, Սիմոնը թողեց Մասէյիչին, իսկ վերջինս երեկոյան յայտնեց, որ միւս օրը նշանը կ'ուղարկէ։

Նետեւապէս Վարդուհին ամուսնացնում էին։

Երեկոյան տուն դառնալուն, Սիմոնը կանչեց Վարդուհին եւ յայտնեց նորան այդ լուրը։ Խեղճ աղջիկը քիչ մնաց նուազէր եւ պատասխան չը տուաւ, ուստի Սիմոնը այդ ամաչկոտութեան վերադրելով, ուրախութեամբ ձեռքերը շիւթեց, գործի վերջացած լինելը երեւակայելով։

Օրինկա խանութը իսկոյն իւր դրացիներին պատմեց այդ եւ բոլորը հիացան, որ նա Արտեմ Մասէյիչի նման հարուստ փեսայ է ունենալու։ Այդ լուրը միւս առաւօտեան հասաւ Տ. Հռիփսիմէի ականջին, նա խորամանկութեամբ ժպտեց, իսկոյն վերարկուն հագաւ եւ Մողնի թաղը - Կաթողիկական փողոցը իջնելով թիւ 3 փառաւոր տան առաջ կանգ առաւ, զանգահարեց եւ եկող ծառային իւր այցելութիւնը Արտեմ Մասէյիչին յայտնելու պատուիրեց։

Արտեմ Մասէյիչը միայն մի բոլորովին ծերունի մայր ունէր, որը սենեակից դուրս չէր դալիս եւ երբ եկան իմացրին որ մի երիտասարդ եւ սիրուն կին ուղում է նորա հետ խօսիլ, նա չիոթուեց, մտածեց իւր մօրը կանչել, բայց պառաւ դեռ եւս եկեղեցուց չէր վերադարձել, ուրտեղից նորան տուն դալու համար մի ժամ ժամանակ պէտք էր։

—Ներս հրաւիրիր այդ կնոջ, հրամայեց նա իւր ծառային, փառաւոր կահուած հիւրանոցը մտաւ եւ նստեց մի բազկաթոռի վրայ։

Հռիփսիմէն ժպիտ երեսին ներս մտաւ, թոթուեց Մասէյիչի ձեռքը եւ նստելով յայտնեց, որ ինքը մի լուրջ խնդրի համար էր եկել։

Մասէյիչը սիրուն դտաւ Հռիփսիմէին, ուստի չհարցրեց իսկ թէ նա ով էր, այլ ընդհակառակն հրաւիրեց նորան նստիլ իւր մօտի բազկաթոռին վրայ։ Հռիփսիմէն նըստեց եւ նորա աչքից չը վրիպեց Մասէյիչի

դողալը, երբ նորա միմեանց աչքերի մէջ նայեցին մի վարկենաչափ:

—Դուք ամուսնանում էք, այնպէս չէ՞, հարցրեց տիկինը մի սիրուն ժպիտով:

—Վա՛, այդ ո՞րտեղից խնայաք, գոչեց Մասէյիչը — ի՞նչ սատանայ էք:

Հռիփսիմէն ծիծաղեց եւ իւր երկու շարք ատամներով հիացրեց Մասէյիչին:

Եւ իրաւ այդ ատամները սքանչելի էին:

—Ամբողջ Տիփսիսը գիտէ այսօր ձեր ամուսնալը, դիտեց Հռիփսիմէն:

—Վա՛, ղուրթ (1), թէ քու Աստուածը կու սիրիս, էդ ի՞նչ շուտ տարածուիլ է տօ . . .

Մենք կամենում ենք Արտեմ Մասէյիչի եւ Հռիփսիմէի խօսակցութիւնը ընթերցողին տալ այն կերպով ինչպէս նորա խօսուած էին, մի գաղափար կազմել տալու համար Տիփսիսի բնիկ ժողովրդեան հայ բարբառի մասին:

—Այնպէս մեծ անուն ունիք, դիտեց Հռիփսիմէն շողորդութեամբ — որ ձեր վերաբերութեամբ պատահած մի դէպք կայ — ծակի արագութեամբ տարածվում է:

—Այո, լա՛ւ, ամա վուր դեռ վունչինչ չը կայ ո՛ւ . . .

—Կը լինի ի հարկէ, նշան ուղարկելը կը նշանակէ ամուսնանալ:

—Ղուրթ է, մադամ, ամա իս կ'ուզէի իմանայ թէ . . .

—Ի՞նչ պատճառով եմ եկել, այնպէս չէ՞, միջահատեց տիկինը:

—Հա, հէնց էտ է, ի՞նչ ունիմ ծածկելու:

—Ծածկելու ոչինչ չը կայ, ես եկել եմ որ ձեր ամուսնոյ համար մի քանի տեղեկութիւններ տամ ձեզ, ի հարկէ կ'ուզէիք իմանալ:

—Վա, վա՛, ի՞նչ ասիլ կ'ուզի, ի հարկէ, աղջիկ պարուն, ամա բայց դուք մէքաչ (2) «մուցիքը»-ի:

«Մուցիքը» կամ «մուցիքը» կոչվում են Տիփսիսում վխտացող այն կանայք, որոնք տնէ տուն են մտնում, դտնում են եւ միմեանց են միացնում 25 տարեկան աղջիկը 20 տարեկանի հետ, ներկած եւ գեղեցկացած պառաւր ռսկեղծելով մի սիր-

րուն տղայի հետ խաբում են, ճարտարախօսում են եւ գործը վերջացնելուց առաջ իրենցն են վերջացնում, հարիւրներ են գջլում (1), անբարոյական աղջիկ կապում են մէկի գլխին, սրիկայի մը խաղաղ ընտանիքի մէջ են մոցնում . . .

Կարճ խօսք կ'ուզէ՞ք — «մուցիքը» միջնորդ կամ հարսնախօս է նշանակում:

Բայց այդ անունը Տիփսիսեցւոց մէջ անպատիւ անուն է, որովհետեւ «մուցիքը»-ները թէ՛ կաւատներ են եւ թէ՛ կոյս աղջիկների խաբող եւ նոցա պատիւը մի քանի թղթադրամով ծախելուց յետոյ, լլկուած աղջկան անառականոցներ ձգող, ուստի տիկին Հռիփսիմէն ունըը պոստեց եւ ասաց լուրջ ձայնով:

—Ես «մուցիքը» չեմ, այլ մի պատուաւոր կին, որը ձեր անպատուութիւնը չէ ուզում տեսնել իւր չընպատում:

—Ի՞նչ, ի՞նչ . . . կակաղեց Մասէյիչը — անպատուութիւն . . . ի՞նչ կայ վուր:

—Այո կայ, չետեց Հռիփսիմէն — որ ձեզ խաբել են, Վարդուհին . . .

—Խաբի՞լ ին, բացադանչեց Մասէյիչը վախեցած-վճռեց (2) թէ խաբիլ ին, տօ՛, ես երեխայ եմ, իրենց հօրն ողորմի, միթամ (3) ես խամ եմ, աբա մէ (4) 2000ը նախդ ձեռիս միջին չը դնին . . .

Եւ նա գէր ձեռքը բաց անելով իւր լայն ափը ցոյց տուաւ:

—Խնդիրը փողի վրայ չէ, Արտեմ Մասէյիչ, ասաց Հռիփսիմէն:

—Աբա ուրիշ ինչ կայ . . . գոչեց Մասէյիչը աղատ շունչ անելով:

Նա կարծեւ էր որ իրեն խաբել են եւ Վարդուհին փող չ'ունի:

—Վարդուհին, ասաց Հռիփսիմէն, բայց ցոյց տուաւ թէ չէ կարողանում շարունակել, ծանրակշիւ անել մտածելով իւր ասելիքը, եւ իրաւ, Մասէյիչը գունաթափուեց, բայց չը գիտէր թէ ինչո՞ւ:

—Ասա՛, թէ քու աստուածը կու սիրիս, գոչեց նա անզգայօրէն Հռիփսիմէի նիհար ձեռքը բռնելով:

—Վարդուհին արդէն կին է:

Մասէյիչը մի այնպիսի ուստիւն գործեց

(1) Ճշմարիտ (2) Յանկարծ

(1) Պոկել, էլել, կորդել (2) Ի՞նչպէս. (3) Երբ թէ. (4) Հապա թո՛ղ.

աթոռի վրայից, որ մօտի վտերիկ սեղանը կործանուելով, յատակը ջրեց կտորուորվելով քանակներ :

— Ի՞նչ, ի՞նչ, բացառանչեց նա խռպոտ ձայնով — վարդուհին . . .

— Այն է, ասաց Հռիփսիմէն եւ մի յաղթական ժպիտ խաղաց նորա դէմքի վրայ :

— Հանաք խօմ չե՞ս անում, թէ քու արեւը կու սիրիս :

— Ատամ՞կ, միթէ՞ կարելի է այդպէս լըրջ բաների վրայ կատակ անել . . .

— Վուր էտէնց է, աղպէ՛ր, դոչեց Մասէյիչը — չ՞ողկոցինք ո՛չ աղջիկը, ո՛չ էլ նրա փուղը . . . չէ՛, չէ՛, չէ՛, իմ ի՞նչ բանն է մէ էդպիսի աղկայ բերել տանս մէջ :

— Ես էլ այդպէս էի կարծում, դիտեց Հռիփսիմէն — վաղը ամբողջ աշխարհ կ'իմանայ եւ ձեր պատուաւոր անունը կը խայտառակուի :

— Դնորհակալ եմ, մաղա՛մ, խի՛ստ շնորհակալ եմ, վուր եկար իմաց տուիր, վաղ եւետ (1) կու դրկիմ ու նշանը յիտ կուզիմ, էտէնց լաւ չի՞ :

— Ի հարկէ՛, անարատ եւ նորանից հարուստ աղջկի շա՛տ :

— Ետէնց է, մատամ, խի՛ստ լաւ ես ասում, քու հոգուն մեռնիմ . . .

Եւ մի քանի վայրկեանից յետոյ Հռիփսիմէն, անսահման գոհունակութեան ժպիտը դէմքին, Մասէյիչի տանից դուրս կ'երէր, կառքը կը նստէր եւ տուն կը դառնար, ըթի տակից միմեալով միշտ .

— Վրէժի առաջին քարը ձգեցի :

Միւս օրը կայծակը իջնէր Միմնի վրայ, աւելի լաւ էր, երբ Արտեմ Մասէյիչը նշանը ետ ուզեց եւ յայտնեց դորա պատճառը : Միմնը կատաղութեամբ տուն դարձաւ եւ այնտեղ իմացաւ որ աւա՛ղ, այդ ճիշդ էր : Պառկեց նա եւ միւս օրը նորան խոջի վանքի գերեզմանատունն իջեցրէն : Մի ուժգին կաթուած վերջ տուած նորա կեանքին : Իսկ վարդուհին, իւր առ Նիկօլը գրուած նամակին պատասխանը այս ստացաւ . « Սպասիր ինձ, բակում, երեկոյան ժամը 8 ին, Նիկօլ : »

(1) եւ եթ :

Նա ուրախացաւ, նորա մէջ մի յոյս ծագեց, դուցէ Նիկօլը ամուսնանար իւր հետ :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՅ

(Մնացեալն յաջորդ խոսքով)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ի ԶՈՒՐ

(ՈՂԲ ՊԱՆԳԵՏԻՆ)

Ի զո՛ւր ողբերս ուղղեմ յաթու Անահին, Նա եւս, աւա՛ղ, արդ ո՛չ լըսէ բընաւին . Ուրեմն որո՞ւ դիմեմ՝ յոյսըս կտրեցաւ . Թէ չի լըսէ Տէրն իսկ ցաւոցս իմ անբաւ :

Ի զո՛ւր դոչեմանդուլ սիրտըս պատըռտած Դաշտաց վերայ նաեւ երկնից դէմ դիմաց . Լոկ արձագանդ դադարթ լերանց անընհատ Տան ծիծաղկոտ հեծութեանըս հատ ընդ հատ :

Ի զո՛ւր զեփիւռ անուշաբոյր ընդ այդուն Փայփայելով մեղմիկ գալիս ժըրիբրուն, Խառնեալ ընդ սէր ընդ գեղ ընդ յոյս եւ հրատ Գար քաղցրաշունչ ողջագուրել զիմճակատ :

Ի զո՛ւր աստղեր շողանըջոյլ բազմերամ Սէր ցօղեցին վերայ սրտիս լեղահամ, Սէր շէնչեցին ի խոր հոգւոյս տխրական Եւ շոյեցին սիրով գըրըլսս, ընդունայն . . .

Ի զո՛ւր ուսոյց քաղցրախօսակն իսկ սոխակ Մեղամաղձոտ երգել ըստէպ սիրոյ նուադ, Ի զո՛ւր զարթոյց հեշտապատիր բընութեան Կերպ կերպ հաճոյս, յորմէ ցաւեր դուրս եկան :

Ի զո՛ւր վրտակ խոնոջածայն հեզասահ՝ Ոլոր ոլոր վաղվազելով ա՛ն ընդ ա՛ն Տալ կամեցաւ հոգի կեանքին շարունակ Սըրըսկելով վըրաս ջուրերն պաղպաղակ :

Ի զո՛ւր գոյն գոյն ծաղկունք եւ վարդն կարմրերիեան Ընդ բիւր հոտով զիս յար դիւթել կամեցան . . .

Նըմանէի վաղո՛ւց աշնան տերեւոց, Երկինք երկիր ինձ կարգացին եւ հոգւոց :

Ի զոր լալով՝ աշերս դարձան չոր աղբեր
Եւ ծածկեցին խոտերն խալոյն թիւնարեր,
Ահսոս, ոչ ոք ասէ. ինչո՞ւ է չորացած,
Մաքրենք գոնէ խոտերն թոյնով ծածկըւած:

Ի զոր հալիմ տիւ եւ գիշեր հառաջօր.
Սա խեղճ տըղուն վիշտը ինչէ՞ն է արգեօր,
Ո՛չ ոք խորհի, ո՛չ ոք նաեւ հարցընէ.
Բառնան ծիծաղ՝ ասեն. ինչո՞ւս բա՛ պէտ-
քըն է:

Ի զոր մաշիմ՝ յաւէտ ցաւօք դառնա-
համ,

Սակայն որի՞ն հոգն է եթէ ես ողբամ.
Ո՛ւր որ դիմեմ յինէն երես դարձընեն.
Չ'են ըսեր բնաւ. լըսենք գոնէ մէյ մ'իրեն:

Ո՛չ ոք այժմիկ օգնել կամի ընկերին,
Ամէնքն իրենց զուարճութեանց յար նային.
Չ'են մըտածեր երբէք թէ ինչ է աշխարհ,
Պիտի լինին օր մը հողու հաւասար:

ԱՆԱՆՈՒՆ

Ի Գաղկեդոն

ԵՐԳ ՄՇԵՑԻՈՑ

(ՄՇՈՅ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂՈՐԷՒՅ)

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ)

Քրդադոմն¹ է բանի պարսկար², Մատաթ ը-
ման, ըման, ըման

Թիւն ու Բարաիւն է քրդավար,
Ապրդուհար ծեծեն զձաւար,
Երիզակը կը ծախեն տավար,
Ընցնանք⁽²⁾ հացիկ, ընկաւ, յաւար³,
Գանք Յօրնոց տես մարդավար,
Յեքանք⁴ յառաջ, քելենք⁵ պրկար⁶,
Ընցնանք Բերդակ, տես մանտր⁷ դառ,
Երթանք Նօւշէն դեռ ուռի ծառ,
Էդ խութեցիք նախընտր մաթալ⁸,
Կիրիրայ⁹ կուտեն Նօւշնցիք,
Ձըմեն լիզեն էդ Յօշընցիք,
Դժոխքի ճըրաւ են Գալնեցիք,
Խուշկու¹⁰ պառոզ¹¹ էդ Ձրեցիք,
Կռտի¹² ուտող էդ Կռտնեցիք,
Ալզատ¹³ յոռեր¹⁴ էդ Բքլցիք,
Հօլ կը խաղան էդ Յունանցիք,
Գուլմի¹⁵ պարզող էդ Գրօնցիք,
Շատ կը քֆրեն Ալիճանցիք,
Կանկառ կուտեն էդ Աղճանցիք:

Շատ խօրօտիկ են Սուլուխցիք,
Շատ լաչկաւոր էդ Կուռալցիք,

Տէմ խոտ քաղեն էդ Ծխաւցիք,
Պար կը խաղան էդ Ալրցիք,
Էմ լէ զօզօ¹⁶ Ձխարացիք,
Ձերար սիրեն էդ Խալանցիք,
Ճառիմէն¹⁷ կիտեն¹⁸ Մէշտըլցիք,
Տերեւ կտրեն էդ Պաղլըլցիք,
Ալուճ¹⁹ կուտեն էդ Բաղլըլցիք,
Աղքատ հպարտ էդ Տրմեցիք,
Էդ Մօկունքն է Մշու մօտիկ,
Տէքքէ վանք կը քաշեն կօտիկ²⁰,
Ալի ճըռնան սուտ խօրօտիկ,
Էտ Սողդոմցիք թուլմի²¹ հորտիկ,
Նշխուն փաշայ են Մշեցիք:

Զ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

ՈՒՍԹԸՐ, 19 Սեպտ.

«Ամաչեւով կը խոստովանինք թէ ժա-
մանակը՝ հասած է, երբ մենք առանց այլ
եւս մէկ ստակ ծախք ընելու յետս կոչենք
Չինաստանի, Ճաբոնի եւ Թուրքիոյ մէջ աշ-
խատող միսինարները: Յիսուն տարիէ ի
վեր Քոլորովին ի զուր վատնուած մեր ա-
մենակարող տօյարներն ալ աւելի օգտակար
գործեր պիտի տեսնէին մեր երկրին մէջ
խալ, որովհետեւ որչափ որ գիտենք, վե-
րոյնչեալ երկիրներէ եւ ոչ միոյն մէջ նոյն
օրինակ խայտառակութիւնք ի գործ կը դըր-
ուին, ինչ որ ամեն օր մեր աչաց առջեւ
եւ հակառակ օրինաց խոստովանեց տեղի
կ'ունենան աստ՝ մեր ազատ երկրին մէջ:

«Ահա ժողովուրդ մը որ իւր մէջ ան-
թիւ մարդասպաններ ունի, որ երբ ըս-
պանեւ կը ձեռնարկեն, միշտ առ կրօ (մե-
ծաքանակ) կ'ընեն առանց ամաչելու եւ
առանց ահի, մէկ քանի կարճ ժամերու
միջոցին հարիւնքով բանական էականք
յաւիտենականութեան կը ճանբեն, ա-

¹ Գլխադրով գրուածները գիւղերու և գիւղացւոց
անուններ են. — ² սափրիչ. — ⁽²⁾ անցնինք. — ³ օգ-
նուլի. — ⁴ գանք. — ⁵ քալենք. — ⁶ ծառուղի. —
⁷ մանր դառնուկ. — ⁸ վազան. — ⁹ կրիայ. — ¹⁰
աղբ. — ¹¹ յուղող. — ¹² ծեր էդ գոմէշ. — ¹³ ա-
ւաղորտ. — ¹⁴ յետսալողմն. — ¹⁵ մեծ արօր. — ¹⁶ գե-
րազանց. — ¹⁷ տուգանք. — ¹⁸ կուտան. — ¹⁹ հա-
լըճ, պտուղ մը. — ²⁰ հողէ աման. — ²¹ ծխախոտ,
թիւթիւն:

նոնց ինչքը կը կողոպտեն, յորմէ յետոյ փոքր ինչ եւս զբօսանք մ'ունենլու գաղա- նային խորհուրդով, կիզիչ տարրն օգնու- թեան կը կանչեն, եւ այս կերպով հար- իւրներով անմեղներու բնակարաններ կ'ան- հետանան երկրիս երեսէն: Եւ ի՞նչ է բոլոր այս կոտորած եւ աւերակներու անմիջական պատճառը . . . Եթէ երբէք պատճառ կե- նա՛ր . ոչ ինչ՝ բայց եթէ սպանեալք դեղնա- գոյն մօնկօններ և մարդասպանք կովկասեան ցեղերու խառնուրդ մ'էին: Հետեւապէս պիտի ըսուի ցեղային վէճ մ'եղած էր պատ- ճառ բոլոր այդ ամօթալի եղելութեանց: Յեղային վէճ մը, քաւ լիցի: Ուսմինկ տեղի ունեցած կոտորածներու շարժառիթը ցոյց կուտայ անդամ մ'եւս թէ մեր պարծեցեալ քաղաքակրթութիւնը լոկ երեւակայական է, մտացին և ունայն է: Այլ աւելի ապահովու- թիւն կայ կենաց եւ ընչից այն երկիրներու մէջ զոր միսիօնարը տակաւին իւր ոտից փո- չիներովն ապականած չէ, եւ այդ աճուրդի տրուած քրիստոնէութիւնն զոր հաւովմէակա- նութիւնն եւ բողոքականութիւնը միօրինակ կը վաճառեն, առանց սակայն պարկեշտ յաճախորդներ գտնելու, աւելի օգտակար ձեռնարկ մ'ըրած պիտի ըլլար եթէ ճարօ- նի, Չինաստանի եւ Թուրքիոյ մէջ խղճի մը- տօք պաշտուած կրօնները սերտեր, համա- ձայնեցնելով իւր վարդապետութիւններն արեւելքցւոց բարոյական զօրութիւններու: զի մեք համոզուած ենք թէ երկրագուն- տիս չորս անկիւնները պատահած կոտո- րածներու բոլորն ալ մեր եւ ուրիշ միսիո- նարներու քրիստոնէական կրօնի քօղին ներքեւ սերմանած ատելութեանց ար- դիւնքն են:

«Մեր Ուսմինկի թղթակիցը կը պատմէր անցեալ օր թէ ինչպէս քիչ ժամանակ ա- ռաջ միսիոնարք կը գործէին, մեր քաղա- քացւոց եւ մօնկօններու մէջ. միայն քարոզե- լով թէ մօնկօյը հեթանոս է եւ կրօնսեալ, մինչդեռ իւր եղբօր մօնկօններու կ'ուսուցա- նէին թէ ամերիկացիք մեղաց մէջ ընկղմեալ թերահաւատներ են. եւ թէ երկուստէք պարտին դադրեցնել որ եւ է առնչութիւն միմեանց հետ: Հետեւութիւնն ի՞նչ եղաւ. ահա ինչ որ բոլոր քաղաքակիրթ աշխարհ գիտէ արդէն եւ կ'ողբայ եղածին վերայ. մեք ալ ուրախութեամբ պիտի ձայնակցէինք

նոցա եթէ այդ քստմնելի եղելութիւն վեր- ջինն եղած ըլլար»:

Վերոյգրեալ տողերը Զիգակօի մէջ հրա- տարակեալ թերթէ մը կը թարգմանենք, զոր այս օրերս քանիցս պատահած ամօ- թալի կոտորածներու պատմութիւնն ընելու առթիւ կը հրատարակէ: Մեք մեր կողմանէ միայն սա չափ պիտի աւելցնենք թէ տե- դացի ամբօխին նոյն օրինակ ամօթալի ա- րարքները լոկ մօնկօյ ցեղին դէմ ուղղուած չեն, այլ ընդհանուր օտարազգեաց, ընդ- որս և մերազնէից, որոնց տուները կը քար- կոծուին գրեթէ ամեն գիշեր, ոմանք կը դանակոծուին և շատեր ալ կը նախատուին քաղաքիս մէջ: Ոստիկանութիւնը բոլորովին անզօր կամ անիոյթ կը ննջէ . . . :

—Աղբատ մանրավաճառ մը անցեալ օր քաղաքիս երեւելի սեղանաւորներէ պարոն Ա ի տանը զանգակը կը հնչեցնէ. օրիորդ Ա դուռը կը բանայ: Այսօր բան մը կու- ղէ՞ք, կը հարցնէ մանրավաճառը: Ոչ, կը պա- տասխանէ օրիորդը: Ասեղ՝ մատոնց՝ մե- տաքս, երեսի փոշի, ոչինչ չէ՞ք ուզեր: Ոչ: Հին հանդերձներ, հին կօշիկներ ալ կը գը- նեմ, ունի՞ք:

Ոչ, կը պատասխանէ օրիորդ Ա: Քաղցէս կը մեռնիմ կոր. սպառաւ մը հաց եւ դա- ւաթ մը ջուր չէ՞ք կրնար տալ, կը հարցնէ մանրավաճառը: Ոչ, կը պատասխանէ ազնիւ օրիորդը: Հոգ չէ, կըսէ մարդը. ասոնց բո- լորն ալ հոգս չէ եթէ, կինս խեղճ կինս բո- կոտն չի ըլլար. բայց անօգուտ է կարծեմ՝ ձեր կօշիկներէն զոյգ մը խնդրել, զի ձեր սիրուն ոտքերը այնչափ մանր եւ գեղեցիկ են որ . . . : Ներս հրամիկեցէք եւ պատառ մը ճաշ ըրէք, կըսէ օրիորդը, եւ ես ջանամ տեսնեմ թէ ձեզ ինչպէս գոհ կրնամ ընել: Քաղաքիս լրագիրներէն մին որ կընէ այս սիրուն պատմութիւնը, կ'աւելցնէ թէ՛ խօ- սակցութեան վերջին մասէն կէս ժամ յե- տոյ մանրավաճառը կուշտ՝ նոր վերարկու մը ուսին եւ տօլար մ'ալ ի գրպանի իւրում տուն կը դառնար . . . :

—Յայտնի է թէ արծաթ տօլարներէ ոմանց վերայ գրուած է «էն օր» — է լըրըստայսինքն թէ «Աստուծոյ կապաւինինք»: Գի- նեպան մը դրան վերայ մեծ եւ ոսկեզօծ գրերով հետեւեալ կերպով գրած է, «էն

կոտորածները, որոնք օր քան օր շատանում են : այսինքն Աստուծոյ կ'ապաւինինք, իսկ անկէ ի դատ ամեն ոք կանխիկ վճարելու են :

— Գալիֆորնիոյ բնակիչներէ կին մը ամուսնոյն անհաւատարիմ գտնուելու յանցանքով ամբաստանուած դատարան կը տարուի, ուր ամեն ինչ կը խոստովանի եւ սակայն իւր անհաւատարմութեան պատճառը տեղւոյն (Գալիֆորնիայի) կլիմային կը վերագրէ, յայտարարելով թէ «կը փախաքէի տեսնել կին մը որ մէկ տարի կամ աւելի բնակած է Գալիֆորնիայի մէջ առանց չնուծիւն ընելու : Եթէ այս մասին անմեղ անձ մը գտնուի հոն, ես յօժարութեամբ ամենախիստ պատժոյ պիտի զիջանիմ : Գատաւորը կէս հեգնական ոճով մը կը հարցնէ թէ Կլիմայի ազդեցութիւնը միայն ձեր սեռին վերայ կը նշմարուի թէ, ուրիշներն ալ նոյն ազդեցութիւնը կ'զգան . . . : Ներեցէք, տէր, կը պատասխանէ ամբաստանեալ կինը, դուք երեք տարի եւ աւելի ժամանակ պաշտօն վարած էք Գալիֆորնիայի մէջ, հետեւաբար աւելի ճշգրիտ տեղեկութիւններ ունենալու էք ձեր հարցման պատասխանելու . . . : Տիկինը անմեղ արձակուեցաւ :

— Հետաքրքիր անձ մը կ'ուզէ զիտնալ թէ Ամերիկացոց ազգային գոյութեան հարիւր տասը տարիներու մէջ քսան երեք նախագահներ բնակած են Ճեֆֆը Տոն մէջ, ինչպէ՞ս պատահած կամ կարելի է որ նոյն չափ ժամանակի միջոցին եւ այնքան նախագահելու իշխանութեան միջոցին մի միայն երկու մանուկ ծնած է սոյն տան մէջ : Ով որ սոյն տարօրինակ հարցումն ուղիղ լուծէ 100 տօլար վարձատրութիւն կը խոստանայ յիշեալ անձը, ուստի, եթէ ընթերցողը «Մասիսի»-ի միջոցաւ մեզ ուղղէն իրենց պատասխաններն, եւ եթէ ճիշդ ըլլան, կը խոստանանք սոյն գումարը հաւաքելով ուղիղ լուծողին հասցէին խրկել :

— Պոսթօն Հէրալտ կը պատմէ թէ իւր քաղաքին մէջ լուսանկարիչ մը կայ այն սատիճան սնանկացած, որ երբ յաճախորդ մը ներս մտնէ ո՛չ ֆօթֆօն ունի եւ ո՛չ ապակի պատկեր առնելու համար . այսու ամենայնիւ Եանքի մը յատուկ յանդգնութեամբ հետեւեալ միջոցը դտած է խանութին ծախքերն եւ ապրուստը ճարելու :

Երբ յաճախորդը ներս մտնէ եւ պատկեր հանել տալ փափաքի, կը նստեցնէ զայն իւր ուղած գիրքին մէջ, գլուխն, ուսերը, ձեռքերն ու ոտքերը լաւ մը կարգադրելէ վերջ, մութ սենեակը կը մտնէ կ'ելնէ, որպէս թէ ապակին կը պատրաստէ եւ յետոյ լուսանկար գործիին ետին կանգնած, հոնայէ, աչաք չէցէ, մէկ, երկու, երեք . . . եւ շատ գեղեցիկ եղաւ . . . ըսելով, մէկ երկու տօլար կանխիկ դրամ կ'ստանայ եւ կը ճամբէ յաճախորդը : Սոյն դրամով քիչ մը այլ եւ այլք գնելէ վերջը, յաճախորդին նամակ կը գրէ ցաւօք յայտնելով թէ իւր կենդանագրոյն ապակին դիպուածով մը կոտրած ըլլալով, երկրորդ նիստ մ'ընել կը հրաւիրուի եւ այս կերպով յաճախորդը վերջստին կուգայ եւ վերջապէս իւր կենդանագիրը կ'ընդունի : «Իւր նաւը փրկողը նաւապետն է» կ'ըսէ թուրք առածն, որ շատ ճշմարիտ է :

Մ. ԹՕՓՀԱՆԵԼԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

14-20 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱՐՏԱՔԻՆ — ՆԵՐՔԻՆ

— 0 —

ՊՈԽԼԿԱՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՆ

Պուլկարական ապստամբութեան խնդիրը կը շարունակէ քաղաքական աշխարհի ուղը գրաւել : Պուլկար զօրքեր եւ կամաւորք կը համախմբուին ի Փիլիսիէ եւ Արեւելեան Րումէլիի գլխաւոր կեդրոններն : Հրամանաւ Վեհ. Սուլթանին, օսմանեան զօրք զրկուեցան յԱդրիանուպօլիս, սահմանագլխոյն վրայ համախմբուելու համար, սակայն տակաւին որ եւ է ընդհարում տեղի չունեցաւ ընդ մէջ կայս. զօրաց եւ պուլկարաց :

Կը ջանանք ըստ կարի ամիսօրիւ աստ շաբթուս կարեւորագոյն լուրերն պուլկարական ապստամբութեան վրայ :

Ալեքսանդր Իշխան. Պուլկարիոյ Իշ.

խանն հետեւեալ հեռագիրն ուղղած է Մեծ Տէրութեանց .

«Արեւելեան Րումէլիի նախկին կառավարութիւնը դադրած լինելով, ժողովուրդն, ընդհանրական քուէարկութեամբ մը, զիս իրեն իշխան հռչակեց : Պուլկար իշխանապետութեան բնակիչք միաձայնութեամբ խնդրեցին յինէն ընդունել զայս անուանում : Ի նկատ առնելով իմ նուիրական պարտականութիւնս դէպ յիմ ժողովուրդս, ընդունեցի զայն պաշտօն առ Պուլկար ազգն ուղղեալ յայտարարութեամբ մը Փիլիպէ հասած և կառավարութիւնն ստանձնած լինելով, ամենէն հանգիսաւոր եղանակաւ կը յայտարարեմ թէ երկու Պուլկարեաներուն ի նորոյ միացումը կատարուած է առանց բնութիւնամասկան դիտման ընդդէմ Օսմ. Կայս. կառավարութեան, որ զերիշխանութիւնը կը ճանչեմ, Կերաշխաւորեմ երկուց երկրաց հանգարտութիւնն և բնակչաց ապահովութիւնն առանց խտրութեան ցեղի և կրօնի : Կը դիմեմ Ձեր Կառավարութեան, խնդրելով որ ճանչէք իրաց այս նոր վիճակ, և միջնորդէք վեհ. Սուլթանին մօտ որպէս զի նա ևս հաճի վաւերացնել միութիւնըն՝ աւելորդ արինհեղուծիւն մը արդիւնէլու համար, ըստ որում ժողովուրդըն որոշած է ցմահ պաշտպանել կատարեալ իրողութիւնը : »

— Պ. Հիրշ Վիէնայէն հեռագրած է Արև. երկաթուղեաց Տնօրէնութեան ի Կ. Պոլիս, որպէս զի Օսմանեան Կառավարութեան դէպ Սերեւելեան Րումէլի զրկել ուզած զօրքերն ու ազմամթերքը փոխադրելու համար Տնօրէնութիւնը կանխիկ դրամ չպահանջէ, այլ վարկով փոխադրէ, ետքէն հաշուակցելու պայմանաւ : — Պ. Հիրշ այս կարգադրութեամբ կարեւոր ծառայութիւն մը կը մատուցանէ Օսմանեան Կառավարութեան, կա-

տարելով միանգամայն հայրենասիրական պարտականութիւն մը, զոր ունին ամեն երկրի հանրային մեծ հաստատութիւնք՝ քաղաքական տաղնապետներուն մէջ երկրին կառավարութեան զօրավիգ լինելու համար :

Գլխաւորիտական ակմարց մէջ յայտնուած կարծիքը Ռուսիոյ « անհատկեալի » ընթացքին վրայ՝ սա է թէ, Ռուսիա իրօք կը հաւանի հարաւային և հիւսիսային Պուլկարիոյ միացման, և անշուշտ նախապէս քաջալերած է Պուլկարները՝ Միութեան գործն ի գլուխ հանելու : Բայց, յետեւը իրենց համար, այսինքն Պերսիին Գաշնադրոյն ուղղակի հակառակ դիրքի մը մէջ չդառնուելու համար, և միւս կողմէ Բ. Դրան հետ իւր վերջերս հաստատած բարեկամական յարաբերութիւններն՝ որոց մեծ արժէք կուտայ՝ չխանգարելու համար, Ռուսիա ըստ երեւոյթի կը պարսաւէ Ալեքսանդր Իշխանն, որոյ անձէն ալ դժգոհ է, և ներկայ պարագայն ի դէպ կը համարի՝ հրաժարեցնելու համար զն. Բարձրութիւն :

— Պերսիէ կը հեռագրուի սեպտ. 26 ին թէ Տէրութիւնը պիտի ճանչեն Արեւելեան Րումէլիի միութիւնն ընդ Պուլկարիոյ, բայց տակաւին համաձայնութիւն չէ լգոյցած թէ ո՞վ պիտի լինի ապագայ Պուլկարիոյ իշխանն : Ալեքսանդր Իշխանին պաշտօնը վերջացած կը համարուի :

— Օսմ. նոր նախարարութեան կազմութեան Եւրոպիոյ մայրաքաղաքաց մէջ տըրուած մեկնութիւնն այն է թէ, Ռուսքիս պիտի սպասէ և զինուորական գործողութիւն մը չպիտի ընէ առանց Տէրութեանց հաւանութիւնն ստանալու :

— Սերպիա 22,000 զօրք ըստ ամենայնի պատրաստած և սպառազինած է՝ անմիջապէս պատերազմի ասպարէզը մտնելու համար և քիչ օրէն այս զօրաց թիւը 40,000 ի պիտի հասնի : Սերպիա լըջօրէն կը պատրաստուի երկարժամանակեայ պատերազմի մը, և աչք տնկած է « Հին Սերպիոյ » վրայ :

— Մակեդոնիոյ մէջ քաղաքական դադունի գործակալներ կ'աշխատին ապստամբութիւն մը գրգռել :

— Պուլկարիոյ զինարանը չարունակ կը բանին, և պատերազմական պատրաստու-

թիւնք մեծ եռանդեամբ յառաջ կը տարուին Ալեքսանդր Իշխանին հրամայած երկրաց մէջ :

— Գարատաղի կառավարութիւնն ալ , հետեւելով Սերպիոյ օրինակին , պատերազմական վիճակի մէջ կը դնէ իւր բոլոր զօրքեր :

— Պ. Կատկով նոր յօդուածով մը կը պահանջէ որ Ռուսիա միջամտէ ի Պուլկարիա և պաշտօնանկ ընէ Ալեքսանդր Իշխանը : Ռուս թերթեր կը պահանջեն Պուլկարիոյ վերագրաւումը ռուսական բանակէ մը :

— Բ. Դուռը շրջաբերական մ' ուղղելով մեծ Տէրութեանց , բողոքեց Պուլկարիոյ Իշխանին այն որոշման դէմ որով կ'ուզէ Արեւելեան Բուսմէի իսլամ ժողովրդեան ձեռքէն զէնքերն առնուլ :

— Կլարուի թէ Արեւ. Բուսմէի առժամեայ կառավարութիւնն ետ առած է իսլամներէն , Յոյներէն , Հայերէն և Հրեայներէն զօրք գրելու հրամանն և կը շատանայ բանակին ծառայութեան համար վար դնել միայն անոնց ձիերն ու սայլերը : Բաց աստի , մէն մի ընտանիք պարտաւոր է տաս քաշ ալիւր և մաս մը մանած տալ :

— Արեւել. Բուսմէի վերջին դէպքերն իրենց արձագանդն ունեցած են ի Մակեդոնիա և Ալպանիա , ուր իրաց կացութիւնն այնքան գոհացուցիչ չէ և ծանր մտահոգութիւն կը պատճառէ քաղաքական աշխարհին :

— Պուլկարիոյ Տալարանաց տնօրէնք հրաման ստացած են՝ ժողովրդեան յուզում պատճառով հրատարակութիւններ չընել : Կ. Պոլսոյ քաղաքացի մուտքն ի Պուլկարիա արգիլուեր է և նամակները գրաքննչութեան բովէն կ'անցնին , իրենց հասցէին յանձնուելէ առաջ :

Ի Պաւլաբէ . Շատ մը երկչոտ Պուլկարք Սերպիա կ'ապաստանին եղբր , հրամայեալ ընդհանուր զինուորագրութենէն զերծ մնալու համար :

— Պելճ բանակին մէջ ծառայող կարգ մը պուլկար սպայք կանչուեցան Սոփիա :

— Տիկնայք « ոչ-փափկասունք »

Պուլկարաց աշխարհին՝ մասնախմբեր կազմած են նպաստելու Ազգային Միութեան կենսական գործին : Զգեստներ կը շինեն և կը կարկտեն , և կը շրկեն ազգային զինուորաց որք կը պատրաստուին և կը համախմբուին ի պաշտպանութեան Հայրենեաց :

— Ալեքսանդր Իշխանն Արև. Բուսմէի սահմանագլուխը դնաց , հոն համախմբեալ պուլկար բանակն աչքէ անցունելու , պէտքերն իմանալու և զօրքերը քաջալերելու համար :

— Պուլկար հեծելազնոց համար մեծ թուով ձիեր կը նուիրուին հայրենասիրաց կողմէ . բայց կամաւոր նուէրք բաւ չլինելով , կառավարութիւնն ետքէն գինը վճարելու պայմանաւ կը ժողովէ բնակչաց ձիերը :

ՊՈԼԻԿՈՐԻՑՅՈՒՆՆԵՐ ՎԻՃԱԿԸ

Վառնա , 30 սեպտ.

Փիլիպէի դէպքերը Վառնայի և շրջակայ գիւղօրէից Պուլկարներուն մտաց վրայ յառաջ բերած չեն թուիր այն գրգռութիւն որ ակնկալելի էր : Բայց պուլկար կառավարութեան որոշած ամեն տնօրինութիւնք ընդունուեցան անմուռնով :

Զէնք բռնելու կարող ամեն Պուլկարք զինուորագրեցան , և զինուորական կրթութեամբ կը պարապին բոլոր օրը :

Պուլկարաց երեւելի սեղանաւորը և վաճառականք հրաւիրեցան կարեւոր գումար մը հանգանակել իրենց մէջ , որ պիտի գործածուի սպառազինութեան և զօրահանութեան հաւանական ծախսուց :

Ձարին հրամանն որ ռուս սպայից կը պատուիրէ հրաժարիլ պուլկար բանակին ծառայութենէն և վերադառնալ Ռուսիա , կամ քաղաքային զգեստ հագնիլ՝ Պուլկարիա մնալ կարենալու համար , խորապէս աղքատեց Պուլկար բանակին վրայ : Այս հրաման գործադրեցաւ երեկուրէն ի վեր : Հետեւապէս , պուլկար ենթասպայք աստիճանի բարձրացում մը ստացան և ռուս սպայից տեղն անցան , և այսու ամենայնիւ դժգոհութիւն

կը յայտնեն ռուս կառավարութեան որոշման դէմ:

Կառավարութիւնը կը փութացնէ շըր-
ջակայ գիւղօրէից ցորենին հաւաքումն եւ
ամբարումը. ցորենի գիներն ամուր են,
բայց կը գուշակուի թէ ի մետոյ պիտի ար-
գիլուի ցորենի արտածութիւնն, երկրին մէջ
բաւական ցորեն պահել կարենալու համար.
զի հողագործք, զինուորական վարժու-
թեամբք զբաղեալ, կը պակսին դաշտօրէից
մէջ աշնանային սերմնացանութեանց հա-
մար, որք ամենէն կարեւորն են Պուլկարիոյ
մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

—Կայս. անձնական Գանձուն նախա-
րար Վսեմ. Յակոբ փաշա Քաղաքեան զոր
Վեհ. Սուլթանն անուանած էր միանգա-
մայն Ելեւմտից նախարար, հրաժարական
մատոյց այս վերջին պաշտօնէն:

Կայս. հրամանաւ, Ելեւմտական նախա-
րար անուանեցաւ նախորդ Ելմտական նա-
խարար Զիհնի էֆէնտի որ նոր նախա-
րարութեան մէջ անուանած էր Էֆգաֆի
նախարար, եւ այդ պաշտօնին մէջ
իրեն յաջորդեց Վսեմ. Զիհնի էֆէնտի:

Ներքին գործոց նախորդ նախարար Բարձր.
Էտհէմ փաշա հրաժարական տուաւ Փարի-
զու օսմ. դեսպանութեան պաշտօնէն: Հե-
տեաւար Էսաա փաշա կը մնայ դեսպան
Փարիզու եւ Միւնիք փաշա Պէրլին կեր-
թայ յաջորդելու օսմ. դեսպան Սայիտ փա-
շայի որ մայրաքաղաքս կուգայ իբր ար-
տաքին գործոց նախարար:

—Ատանայի կուսակալ Ապէտտին փաշա
Սեբաստիոյ կուսակալ անուանեցաւ եւ
Հանրօգուտ շինութեանց նախորդ նախա-
րար Բայիք փաշա անուանեցաւ կուսակալ
Ատանայի:

—Ներքին գործոց նախարար Վսեմ.
Միւնիր փաշայի նախագահութեամբ Յանձ-
նաժող մը կազմուեցաւ, որոյ անդամք են՝
Կայսերական անձնական Գանձուն նախարար
Վսեմ. Յակոբ փաշա, Ելմտական եւ Հան-
րօգուտ շինութեանց Վսեմ. նախարարք եւ
Մաքսային վերատեսուէն:

Այս Յանձնաժողովոյ պաշտօնն է՝ Տէ-
րութեան ելմտական վիճակը բարւոքել,

հասոյթները բազմացնելու աշխատիլ եւ ա-
մեն միջոց ձեռք առնուլ որպէս զի կառա-
վարական բոլոր պաշտօնեայք ամեն ամիս
կանոնաւորապէս ստանան իրենց ամսաթո-
շակներն:

—Պետական Խորհրդոյ նախագահ եւ
արտաքին գործոց նախարարի տեղակալ
Բարձր. Արիֆի փաշա՝ Վեհ. Սուլթանէն
պաշտօն ստացած է՝ իբր օսմ. լիազօր պատ-
ուիրակ շարունակել Սըր Տ. Ուոլֆի հետ
սկսուած բանակցութիւններն ի մասին Ե-
գիպտական խնդրոյն: Օսմ. երկրորդ լիա-
զօրն դեռ որոշուած չէ, սակայն հաւա-
նական կերեւի որ այդ պաշտօն յանձնուի
Սրտաքին գործոց նախարարի խորհրդական
Տատեան Վսեմ. Յարութիւն էֆէնտիի:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

—o—

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ ընկերակ-
ցութեամբ Պատրիարքարանի գործակատար
Արքահամ էֆէնտիի՝ անցեալ շաբթու Բ.
Դուռն երթալով, այցելութիւն տուաւ Մեծ-
Եպարքոս Քեամիլ փաշային եւ շնորհաւորեց
Ն. Բարձրութեան պաշտօնն եւ այս առթիւ
բարեմաղղութիւններ ըրաւ վստահեց
Օգոստ. Սուլթանին եւ օսմ. Նախարարաց:
Բարձր Մեծ-Եպարքոսն յոյժ սիրալիլ ըն-
դունելութիւն ըրաւ Ս. Պատրիարք Հօր:

Ն. Արքապետութիւն ապա շնորհաւորական
այցելութիւններ տուաւ բոլոր նորընտիր
նախարարաց եւ համակիր ընդունելութիւն
գտաւ ամենէն ալ:

—Երկուշաբթի օրն ալ Ն. Արքապետութիւ-
նըն այցելութիւն տուաւ նախորդ Մեծ-
Եպարքոս Բարձր. Սայիտ փաշայի եւ Ներ-
քին գործոց նախորդ նախարար Բարձր.
Էտհէմ փաշայի:

—Սպայակոյտի զօրավար Վսեմ. Նէճիպ
փաշա Ազգ. Պատրիարքարան գալով, այցե-
լութիւն տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

—Մշոյ Առաջնորդ Ալթաթեան Տ. Գրի-
գոր եպիսկոպոսի պաշտօնական գրերը
պատրաստուած լինելով, Ն. Գերապատուու-
թիւն այս կիւրակէ օր Իսկիւտարի Ս. Խաչ
եկեղեցոյ մէջ հանդիսաւորապէս պատարա-
ղելէ եւ իւր հրաժեշտի ողջոյնը տալէ յետոյ
պիտի մեկնի իւր պաշտօնատեղին:

— Պոյաճեան Յովհաննէս էֆէնտի՝ որ Ազգ. վարչութեան կողմէ լիազօր պատուիրակի պաշտօնով Պանտրքմա դնացած էր, մայրաքաղաքս վերադարձաւ :

— Կը յիշուի թէ Արժ. Յովհաննէս վարդապետ Նէվրուզեան տեղապահութեան պաշտօնով Բաբերդ դնացած էր : Ամեն. Ս. Պատրիարք Հայրն որոս պաշտօնը վաւերացնող հրամանագիրն ստացած լինելով Բ. Դանէն, իւր կողմէ յանձնարարականաւ մը Կարնոյ վսեմ. կուսակալին յղեց :

— Գաղատիոյ առաջնորդական Տեղապահ Արժ. Կարապետ վարդապետ Բաղրատունի շաբթօս կը մեկնի յիւր պաշտօնատեղին : Ամեն Ս. Պատրիարք Հայրն յանձնարարական մը տուաւ Ն. Արժանապատուութեան, ուղղեալ առ կուսակալն Գաղատիոյ :

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՐԵԿԻ ՆԻՍՏԸ

(ԽՆԴԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ)

Ազգ. երեսփոխանական ժողովն ի դռնփակ նիստ գումարեցաւ երեկ առաւօտ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Ատենապետութեամբ Վսեմ. Տիգրան էֆէնտի Եուսուֆեանի, Ներկայ էին իբր վաթսուն երեսփոխանք :

Ժողովն յետ լսելոյ Էջմիածնայ Ս. Սինոդի կողմէ օգոստ. 24 թուով առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ուղղեալ հեռագիրն ինչպէս նաեւ ապա հասած պաշտօնագիրն որք կը ծանուցանէին Վեհ. Տ. Մակար Ս. Արքեպիսկոպոսի հաստատումն ի Կաթողիկոսութիւն աւմենայ Հայոց, հակիրճ վիճարանութեանէ մը յետոյ՝ որոշեց Յանձնաժողով մ'ընտրել ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, պաշտօն տալով նմա քննել Կաթողիկոսական խնդրոյն պարագայներն և առաւուսին 13 օրէն տեղեկագիր մը մատուցանել առ Ազգ. ժողովն : Երեսփոխանք աղատ են մինչեւ մէկ շաբթ իրենց կարծիքներն ու դիտողութիւններն յայտնել Յանձնաժողովին :

Այս որոշում տրուեցաւ միաձայնութեամբ ընդդէմ 3 քուէից, յետ որոյ Յանձնաժողովն կազմուեցաւ հետեւեալ կերպիւ .

Արաբ. Յանձնաժողովն

Տ. Խորէն Արքեպիսկ. Նար-Պէյ	
Տ. Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան	
Տ. Յակոբ Ծ. վարդապ. Աշոտ	
Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեան	
Գաբրիէլ էֆ. Նորատունկեան	
Յարութիւն » Մէրնէմուլի	
Յովհաննէս » Թորոսեան	
Կարապետ » Սըվաճեան	
Մարկոս » Աղաբէգեան	
Ստեփան » Փափաղեան	
Տօք. Յարութիւն » Թիրեաքեան	
Յակոբ » Գուրգէն	

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ դատական դործոց Վսեմ. Նախարարին հետ :

Կը լսենք թէ Հաճնոյ ամուսնական խնդրոյն առթիւ հանրածանօթ եղած Դըրդեաշարեանց դժբախտ ընտանիքին բոլոր անդամներն — 17 հոգիք — բողոքագիր մը ղրկած են շաբթօս մէջ առ Ազգ. երեսփ. ժողովն և դարձեալ հեռագրաւ մը հաստատած են իրենց այս բողոք, որով կը պնդեն իրենց ծանուցեալ արդար դատին վրայ, յայտնելով թէ իրենց աղջիկը (Նարկիզ) ամենեւին դո՛հ չէ բռնի աւուսնութեանէն. թէ բռնութիւնն ապացուցեալ իրողութիւն մ'է և կը շարունակէ. թէ իրենք արդարութիւն չեն կրնար գրտնել ի Հաճն. և թէ դատն Ազգ. Պատրիարքարանի կամ ուրիշ դատարանի առջեւ վարելու համար իրենց կողմէ փոխանորդ կարգած են Զաքարեան Ստեփան էֆէնտին, (զոր՝ ինչպէս յայտնի է Կիլիկիոյ Կաթողիկոսն Ատանայէն հեռացնել տուած էր՝ իւր յուր վարչութեան դէմ գործելուն առթիւ)

Կը գտնուի բոլոր գրավաճառաց բով։
Մասնաւոր վաճառատելին է Գալաֆեանն
դրատունը։



ՀՐԴԵՆԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company ՆՈՐԹ-Յ ՊՐԻԹԻՇ ԷՆՊ ՄԵՐԿԱՆԹԻՆԵՅԼ

Հանրային և Էպարիսկոպիտականությանը	Անգլ. Լիր.
Արտոնադրական գումարներ	3,000,000
Բաժանորդագրերի գումարներ	2,500,000
Վճարելի	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահ	
Հակառակության դեմ	1,592,235
Կենսական պատահականության դեմ պահեստի դրամ	3,841,194
	6,058,429
Հրդեհի ծիւղէն հասոյթ	
1883 տարւոյ	1,186,865
Կենսական հասոյթ	
1883 տարւոյ	551,307
	4,738,472

NORTHERN Assurance company ՆՕՐԹ-Յ ԸՐԻՆ

Հանրային և Էպարիսկոպիտականությանը	Անգլ. Լիր.
Բաժանորդագրերի գումարներ	3,000,000
Վճարելի	300,000
Պահեստի դրամ հրդեհի պատահ	
Հակառակության դեմ	841,871
Կենսական պատահականության դեմ պահեստի դրամ	1,778,300
	2,890,471
Հրդեհի ծիւղէն հասոյթ	
1883 տարւոյ	520,206
Կենսական հասոյթ	
1883 տարւոյ	251,572
	771,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծախուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի գումարներ մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ գիւրուածիւններ կը մատուցանէ:

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և գիւրուածեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել:

Գրեթէ ամեն կարգի մտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները:

MARITIME

Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Մոլային ապահովութեան ընկերութիւն

Դրամագումար 500,000 Անգլ. լիբրա

Ստորագրեալը, շրջանաւերու և առաջատանաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ:

Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է դիմեն Կալաթիոյ, Գոմիսիոն Խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յէշեալ Ընկերութեանց
ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՒՅԱՆ

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱՆ ԿԱՆ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՆԻ ԴԵՄ ԲԻԼԱՅԸՆՍ

Մոլային ապահովագրութիւն: -Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուլիթոյ, Եօրկիատիս Խան Պահչէ - գաբու, Պոլիս. կամ Ղալաթիոյ, Ալէքսիատի Խան Թիւ 15:

507

Արտոնատէր Կ. Ս. Իիթիիճեան
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ